

17-18 (307-308)
31. 05. 2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիտնապարտությունն եւ գիրարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар ●

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՎԼԱԴԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԴՊՐՈՋԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԱՌԹԻՎ

Սիրելի շրջանավարտներ

Ձեզ բախտ է վիճակվել 12-ամյա ուսուցման առաջին շրջանավարտները լինելու: Ասել է թե՛ դուք նոր կրթակարգի առաջնեկն եք և հենց այս շեշտումով էլ միշտ հիշվելու եք: Բայց ես ուզում եմ հավատալ, որ ձեր սերունդը միայն դրանով չէ, որ աչքի է ընկնելու. դուք անպայման դառնալու եք մեր նորակախ երկրի արժանի քաղաքացիներ և ձեր ուրույն նպաստն եք բերելու հայրենիքի շենացման գործին: Այն գիտելիքները, որ ստացել եք դպրոցում, ձեր ուսուցիչների տքնաջան աշխատանքի արդյունք են, և համոզված եմ՝ դրանք բազմապատկելու ու լիարժեքորեն ծառայեցնելու եք մեր ժողովրդին: Դրանում համոզված եմ, քանզի դպրոցում միայն ճիշտ դաստիարակությունն է ստացել՝ հիմքում ունենալով հայրենասիրության խորը զգացումը:

Առջևում պետական ավարտական և միասնական քննություններն են, և ամեն մեկը փափագում է իր ստացած գիտելիքների առավելագույն զնահատականն ապահովել այդ քննություններում, հատկապես որ դրանց արդյունքներով են նաև ընդգծվելու ձեր մասնագիտական կողմնորոշումները: Ուստի բոլորիդ մաղթում եմ առույգ տրամադրություն և մտքի պայծառություն:

Այսօր հանրապետության դպրոցներում հնչում է վերջին զանգը, և դա շրջանավարտներիդ կյանքում նոր շրջադարձերի ավետումն է: Թող հաջողություններն ուղեկցեն ձեր բոլոր նախաձեռնություններում:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
25.05.2012թ.

ՄԱԱՍ ԲԱՐՈՎ, ԴՊՐՈՑ



ԽՈՍՔ ԲԱՐԻ ԵՐԹԻ

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը մասնակցել է Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի Վերջին զանգի արարողությանը և ելույթ ունեցել, որում մասնավորապես ասվում է.

- Դուք 12-ամյա ուսուցման՝ կրթության նոր բովանդակության, ծրագրերի, նոր դասագրքերի, նոր մեթոդական հենք ունեցող դպրոցի առաջնեկն եք: Եվ այսօր իրավունք եք վաստակել նոր ճանապարհի ընտրելու, մեծ կյանք տանող ճանապարհի: Այո, դպրոցում սովորելու տարիներին աշխարհընկալում եք ձեռք բերել, գիտելիքներ, սովորել եք պարզ ու շիտակ ընկերություն անել, ազնիվ ու աշխատասեր լինել և ուսումնառության տարիներին՝ ձեր կյանքի ուղադրակ շրջափուլում ունեցել եք ուրախության և հուզումնալի պահեր: Այսօր այդ պատանեկան տարիները դարձան հուշ և մնացին անցյալում: Ու ասում ենք՝ դուք գնում եք կյանքի նոր ճանապարհով: Այս ճանապարհն ավելի պատասխանատու է այն առումով, որ դուք պետք է ճիշտ ընտրություն կատարեք, մասնագիտության ընտրություն, որը հետագա ողջ կյանքում ուղեկցելու է ձեզ: Ես համոզված եմ, որ այս կրթօջախը տվել է ձեզ գիտելիքներ: Եվ հենվելու եք այդ գիտելիքների վրա ու ճիշտ ընտրություն եք կատարելու: Այսօր Արցախի 1688 շրջանավարտներին սպասում են քննություններ: Նրանցից 1255-ը կհանձնեն միասնական քննություններ: Համոզված եմ, որ պատվով եք հանձնելու և ընդունվելու համապատասխան ուսումնական հաստատություններ:

Սիրելի ուսուցիչներ, տոն օր է նաև ձեզ համար, քանզի այսօր դեպի մեծ կյանք եք ճանապարհուում նոր սերունդ: Սերունդ, որն իրոք, զինված է գիտելիքներով, սերունդ, որը հայրենապաշտ և գաղափարապաշտ սկզբունքներ է որդեգրել, հայրենասիրական ոգով դաստիարակվել: Սերունդ, որն իրոք, անմնացորդ կնվիրվի հարազատ պետությանը՝ աստվածացնելով և հպարտանալով

նրանով: Սերունդ, որ այսօր պատրաստ է պաշտպանելու մեր հայրենիքը, կառուցելու և շենացնելու: Ես նաև ձեզ եմ շնորհակալություն հայտնում: Իրոք, հուզումնալից օր է նաև ձեզ համար, որովհետև կյանքի այս պահի համար մեծ պատասխանատվություն եք կրում նաև դուք:

Վերջին զանգ, վերջին դաս: Բարի՛ երթ դեպի մեծ կյանք, սիրելի՛ շրջանավարտներ:

Սիրա ԳՐԻԳՈՐՅԱՆ, հ. 11 ավագ դպրոցի տնօրեն.

- Վերջին զանգի տոն, մի քիչ անսովոր...

12-ամյա դպրոց, առանց առաջին դասարանցիների, առանց դասվարի: Խստապահանջ ուսուցիչներ, վերջ չունեցող դասեր, կարճ դասամիջոցներ... Այս ամենը վերջին զանգից հետո այլ կերպ է ընկալվելու: Մի պահ տեղափոխվեց 2009-2010 ուստարի: Հանրակրթության ոլորտում կատարվում են բարեփոխումներ: Կյանքի է կոչվում ավագ դպրոցի ռազմավարական ծրագիրը:

Հ. 11 դպրոցն իր անշուք շենքում հյուրընկալ դռներն է բացում 200 տղաների ու աղջիկների առջև տարբեր դպրոցներից: Եվ եթե լինեք ավագ դպրոցի ճիշտ ընտրության մրցանակաբաշխություն, ապա այս անվանակարգում դպրոցի 197 շրջանավարտներն էլ կարժանանային այդ մրցանակին: Սկսվեց դպրոցական առօրյան՝ իր ուրախություններով, տխրություններով: Եվ մեր հիանալի ուսուցիչների հետ միասին մենք փորձել ենք իրականացնել ավագ դպրոցի գաղափարը: Արդյունքների մասին դեռ վաղ է խոսելը, կզրուցենք քննություններից հետո: Եթե չլինեիք դուք՝ այս տարվա շրջանավարտները, երկի շատ դժվար կլինեիք մեզ համար այն կայացնելը: Կանգնած եք նոր դպրոցի շենքին, որը կոչվում է կյանք: Կվերցնեք ձեզ հետ ամենայն լավը, ինչ մնացել է անցնող մանկությունում՝ լավատեսությունը, բարությունը, հավատը դեպի ապագան: Դուք արժանի սերունդ եք Արցախի աշխարհի, մաղթում եմ

ձեզ անամպ երկինք, հաջողություններ, ուրախություն: Յուրաքանչյուրիդ հաջողությունը լինելու է մեր հաջողությունը: Ես համոզված եմ՝ դուք լինելու եք ոչ միայն ձեր ծնողների, ուսուցիչների, այլև Արցախի աշխարհի հպարտությունը:

Իրա ՍԱՐԻՆՅԱՆ, ԼՂՀ վաստակավոր ուսուցիչ.

- Մեծ կյանք է ճանապարհվում խոստումնալից մի սերունդ, որը պետք է իրականացնի բազում անկատար երազանքներ, իր ներդրումն ունենա երիտասարդ մեր պետության կայացման գործում ու մեր փառապանծ հաղթանակները հասցնի աննվաճ բարձունքների: Այս պայծառ օրը շնորհավորում եմ, ուժ ու եռանդ են ցանկանում, որ կարողանաք հղկել երջանիկ ապագայի հիմները, մարմին տաք ձեր կապույտ անուրջներին ու վստահ քայլեր լույս ճամփաներով: Թող խիճուկ ու բերկրանքը լինեն ձեր մշտական ուղեկիցները, թող ձեր ծով աչքերում ծիածանվեն խաղաղ արշալույսները: Բարի՛ ճանապարհ:

Վահրամ ԴԱԳՐԱՍՆՅԱՆ, Շրջանավարտի ծնող.

- Մեր շրջանավարտներին ցանկանում են ամենակարևորը՝ հավատ սեփական ուժերի նկատմամբ: Կյանքը բացում է ձեր առաջ իր դռները, սլացքե առաջ դեպի բարձունքներ: Երազեք, պայքարեք, արարեք, թռչելու համար թևեր պետք չեն, ոգի է պետք: Հոր և ավագ ընկերոջ իրավունքով իմ խորհուրդներն են հղում ձեզ: Մեր սերունդը շատերի արյան ու կյանքի գնով պահել ու հիմն ձեզ է հանձնում ազատ ու անկախ հայրենիք: Եկել է բարգավաճ Արցախի կերտելու ձեր ժամանակը, և մենք ձեզ ենք պատվիրակում այդ սուրբ առաքելությունը: Թող ցուփ կյանքը ձեզ համար ապրելու չափանիշ չլինի, ձևավորեք այլ արժեհամակարգ, թող ձեզ համար բարձրագույն արժեքներ հանդիսանան մարդը, հայրենիքը, ամուր ընտանիքը:

ՕՐԱԳԻՐ

ԳՊՐՈՒԹՅԱՆ ԶԱՆԸ ՄԻՇՏ ԲԱՐՁՐ ԴԱՆՈՂ ԵՐԿԻՐԸ ԼՈՒՍԱՎՈՐ ԱՊԱԳԱ ԿՈՒՆԵՆԱ

Ուսումնական տարեվերջյան տոնական եռուզեռը Մարտունու շրջանի Գիշի գյուղում հանձնակալ նորակառույց դպրոցի պաշտոնական բացմանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը իր 20-ամյակի տոնակատարությունը նշանավորեց Արցախում մի շարք օբյեկտների բացմամբ, ինչի կապակցությամբ Արցախ էին ժամանել հիմնադրամի տեղական մարմինների շուրջ երեք տասնյակ ներկայացուցիչներ: Այդ շրջանակներում հիմնադրամի պատվիրակությունը եղել է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում, որտեղ կատարվել է դպրոցական նորակառույց շենքի բացումը: Իսկ հաջորդ այցը եղավ Մարտունու շրջանի Գիշի գյուղ: Տոնական գույներով Գիշին ընդունում է այն մարդկանց, որոնց նվիրատվությունների շնորհիվ իրականացել էր վաղեմի երազանքը՝ ունենալ բարեկարգ, ժամանակակից պայմաններով կրթօջախ: Գիշեցիների ուրախությամբ կիսելու էին եկել երկրի նախագահ Բակո Սահակյանը, կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը, պետական և հոգևոր այրեր:

Չոյակերտ նորակառույցի բակում կատարվում է բացման հանդիսավոր արարո-

Արցախ աշխարհում և նրա սահմաններից դուրս հայտնի են դարձել անվանի մանկավարժներ, գիտնականներ, տնտեսական գործիչներ: Արցախյան գոյամարտում շատերի նման այս դպրոցի շրջանավարտներն էլ իրենց ավանդը ներդրեցին հաղթանակի ձեռքբերման գործում, որոնց արածը յուրահատուկ օրինակ է ապագա սերունդների համար: Ցավոք, կորուստներն էլ քիչ չեն, գյուղից՝ 37-ը:

Տնօրենի հավաստիացմամբ՝ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը լավ է պատկերացում իր առաքելությունը՝ այդ հոյակերտ, սուրբ օջախում կրթել ու դաստիարակել մեր վաղվա հայրենյաց պաշտպանին, գիտնականին ու գործարարին, բարերարին, մանկավարժին ու բժշկին, հողի աշխատավորին և արհեստավորին:

Դպրոցական նորակառույցի առթիվ շնորհավորանքի խոսք ասաց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վ. Խաչատրյանը: Նա արժևորեց Մայիսյան եռատոնը, որի տոնակատարությամբ մեր ժողովուրդը



դուրս: Աշակերտները երգում են Արցախի օրհներգը: Հանդիսությունը վարող՝ դպրոցի կազմակերպիչ Հունան Անտոնյանը յուրաքանչյուրին խոսք տալուց առաջ հավուր պատշաճի ներածական է ներկայացնում, որում արտահայտված է գյուղի անցյալը, գիշեցիների ներդրումը Արցախյան շարժմանը, նրա այսօրը: Դպրոցի տնօրեն Արկադի Ավանեսյանը նախ մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների և ողջ գյուղի անունից խորին երախտագիտություն հայտնեց Գիշու նորակառույցի հովանավորներին՝ Վարդանյանների ընտանիքին, բրազիլահայ համայնքի ներկայացուցիչներին, «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ի դեմս նրա գործադիր տնօրեն Արա Վարդանյանի, կառույցը համաֆինանսավորող ԼՂՀ կառավարությանը, հատուկ շնորհակալություն՝ ԼՂՀ նախագահին, որն իր ուշադրության կենտրոնում է միշտ պահել դպրոցի կառուցման ամբողջ գործընթացը, շինարարությունն իրականացնող «Ճանշին» ընկերությանը, բոլոր նրանց, ովքեր նպաստել են, որ հիմնավորց Գիշի գյուղը ունենա նման հոյակերտ կառույց:


Տնօրենը հպարտությամբ նշեց, որ Գիշիում դպրոցյան ջանք վառվում է վաղնջական ժամանակներից: Այստեղ դպրոց բացվել է դեռևս 1882թ: 1932թ կառուցվել է դպրոցական նոր շենք, որտեղ գյուղի երեխաները սովորում էին մինչև անցած նոյեմբեր ամիսը: Իր գոյության ընթացքում այստեղ շատերն են սովորել և դասավանդել:

և մեկ անգամ կարևորեց իր երեկը, այսօրը՝ կանխատեսելով իր ապագան: Նա հետաքրքիր համեմատություն անցկացրեց անցյալ և ներկա իրողությունների միջև: Երբ փորձում ենք առերեսվել պատմության հետ, տեսնում ենք, որ վերջին յոթ դարում և ավելի հայ ժողովուրդը, չունենալով պետականություն, բանակ, մարտահրավերների դեմ մեն ու մենակ էր մնացել մետրոպոլիտանի և իր դպրոցի հետ: Եվ կարողացավ քայլել պատմության դժվարին քառուղիներով, գոյատևել այդ վեհ արժեքների միջոցով՝ հայոց գրեթե, հայ դպրոցի և հայ դպրոցյան շնորհիվ: Այսօր էլ այն պահելու, պահպանելու կարիքը ունենք: Եվ հենց դրա համար ստեղծվեց բանակ, պետականություն: Ու այսօր կարող ենք ասել, որ մեր լեզուն, մեր դպրոցը, մշակույթը պաշտպանված են, շարունակում ենք մեր երթը դեպի հավերժություն: Նման նորակառույցների շահագործումը գալիս է գունարվելու հաղթանակներին, և այդ իսկ իմաստով Գիշիում, մեկ օր առաջ՝ Վաղուհասում, հաջորդ օրը՝ մեկ այլ վայրում նոր կրթօջախի բացումը եռատոնը քառատոն է դարձնում:

ԿԳ նախարարը, առիթից օգտվելով, շնորհավորեց դպրոցի մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներին՝ մեկ ուսումնական տարի և եզրափակելու, իսկ շրջանավարտներին՝ դպրոցն ավարտելու, Վերջին զանգի և մեծ կյանք մտնելու կապակցությամբ:

«Հայաստան» համահայկական հիմ-

նադրամի մեկ ծրագիր ևս կյանքի կոչելու առիթով շնորհավորանքի և բարերարներին, մասնավորապես Վարդանյանների ընտանիքին և Բրազիլիայի հայ համայնքի ներկայացուցիչներին ուղղված խոսք ասաց հիմնադրամի գործադիր տնօրեն Արա



Վարդանյանը: Իրենց սրտի խոսքն ասացին նաև կրթօջախի իսկական տերերը՝ երեխաները, որոնք գեղարվեստական միջոցներով փառաբանեցին երկրի շենքամանը նպաստողներին և իրենց նվիրվածությունն արտահայտեցին հայրենաշեն գործերին:

Հասնում է ամենահանդիսավոր պահը՝ կարմիր ժապավենը կտրում են «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Վարդանյանը և դպրոցի տնօրեն Ա. Ավանեսյանը: Հոգևոր հայրերի կողմից կատարվում է օծման արարողակարգ, որից հետո հյուրերը շրջում են դպրոցում, ծանոթանում դասասենյակներին ու կաբինետներին: Կրթօջախը նախատեսված է 320 աշակերտի համար: Ժամանակին այդքան աշակերտ էր սովորում Գիշիում: Ցավոք, նրանց թիվը պակասել է. այժմ սովորում է շուրջ 180 երեխա: Սակայն ուրախությամբ փաստենք, որ աճ սպասվում է: Տնօրինության տվյալներով, 4-5 տարեկանների թիվը հուշում է, որ մոտ ապագայում աշակերտների քանակը կավելանա: Այժմ գյուղում նախադպրոցական տարիքի շուրջ 100 երեխա կա, ասել է թե՛ հրատապ է նաև մանկապարտեզի հարցը: Այդ խնդիրն այսօր մասամբ լուծվում է դպրոցում նախապատրաստական խումբ պահելով, բայց խնդիր է դրված հին դպրոցական շենքը վերակառուցել որպես մանկապարտեզ:

Նորակառույց դպրոցն ապահովված է ամհրաժեշտ բոլոր պայմաններով: Գույքը նույնպես ամբողջովին նոր է, որը բրազիլահայ համայնքի նվերն է: Առկա են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներ («Փյունիկ» հիմնադրամի նվերն է), ՆՁՊ կաբինետ՝ զենքի պահպանման սենյակով, հոյակապ մարզադահլիճ, հանդիսությունների սրահ, ճաշարան: Համակարգչային դասարան, և ինտերնետ լինելու դեպքում, որը տեղում խոստացավ հովանավորը, այն ոչնչով չի զիջի մայրաքաղաքում իր պայմաններով լավագույնը համարվող հ. 11 դպրոցին:

Նման վերաբերմունքին համարժեք պատասխան է պետք՝ ուսման բարձր որակ և առաջադիմություն: Ի դեպ, նորակառույց դպրոցում արդեն արձանագրվել է առաջին լուրջ հաջողությունը. գիշեցի դպրոցականը քիմիայի առարկայական օլիմպիադայի ԳՀ եզրափակիչ փուլում արժանացել է գովասանագրի:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մայիսյան հաղթանակներ

ՍԱՐԴԱՐԱԴԱՏԻ ԴԱՏՄԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

Ավարայրի ճակատամարտից տասնհինգ դար հետո հայ ժողովուրդը ևս մի կարևոր հաղթանակ տարավ՝ կենաց ու մահու կռիվ մղելով, շահեց Սարդարապատի ճակատամարտը: Այն հայ ժողովրդի արդարացի ընդվզումն էր, կամավորականների ու աշխարհագրայինների միացյալ բռունցքի ուժի արտահայտությունը:

Հայ Առաքելական եկեղեցու զանգերի զորավոր կանչով՝ վարդապետ Եզնիկի 500 հոգևորական նվիրյալ սաները, արցախցիներից կազմված մահապարտների գունդը և կապիտան Իգիթխանյանի հրետանային մարտկոցը մարտի ելան, իրենց անօրինակ քաջությամբ ոգևորելով շրջակա հայկական և եզդիաբնակ գյուղերի բնակիչներին, որոնք նույնպես միացան մահապարտներին: Մարտադաշտում 3500 ասկյարի դիակ թողնելով, թուրքերը խուճապահար փախան: Հետագայում թուրքական ռազմական ղեկավարությունը խոստովանել է, որ հայկական կանոնավոր բանակն այնքան սարսափելի չէր, ինչքան աշխարհագրորդ, որի ցասման դեմ անկարող եղավ անգամ Դարդանելում բրիտանա-ավստրալիական դեսանտին ջախջախած, նշանավոր «Գալիբոլու» դիվիզիան:

Սարդարապատն, այսպիսով, ցույց տվեց, որ միայն ժողովրդական ցասումը կարող է ազգը փրկել կործանումից: Անկասկած, դարաբաղյան պատերազմում ձեռք բերված հաղթանակներում կարևոր դեր են խաղացել Սարդարապատի ճշմարիտ դասերը, որոնցով գոտեպնդված՝ հայ կամավորական ուժերը կարողացան թշնամու դեմ առնել և նույնիսկ նրան ծնկի բերել՝ պարտադրելով հրադադարի:

Սարդարապատը նաև մի կարևոր հուշում է արել՝ հաղթանակները կարող են հարատևել միայն կազմակերպված զինուժ ունենալու դեպքում, և այսօր մեր ազգի մշտագոյության երաշխավորը մարտերում թրծված հայոց բանակն է դարձել: Ուրեմն՝ պատմությունից մենք ճիշտ դասեր ենք քաղել:

Շրջանավարտ

ՈՐ ՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵՄ ԳՅՈՒՂԻՍ



Անչափ հպարտ եմ, որ ծնվել և ապրում եմ Գիշի գյուղում: Իմ ուսումնառությունն անցել է հին դպրոցում, որտեղ սովորել են նաև մեր ծնողները, բայց ավարտում եմ նոր դպրոցում, և այս նորակառույցի առաջին շրջանավարտները մենք ենք: Առաջին անգամ մենք ենք հնչեցրել

առաջին զանգը, որի դողանքը կհնչի դարերդար մեր ազատագրված Արցախ աշխարհում: Մանկության հուշերս խառնված են և՛ հին, և՛ նոր դպրոցի հետ: Կցանկանամ իմ արժանի տեղը գտնել կյանքում, լինել լավ մասնագետ, կատարել այնպիսի գործեր, որ կարողանամ ուրախություն պատճառել մարդկանց, օգտակար լինել նրանց, որ ինձանով հպարտանան իմ ծնողները, իմ համագյուղացիները: Հետագա կյանքս կցանկանամ ապրել այնտեղ, որտեղ ինձ հարազատ է, այսինքն՝ իմ գյուղում, իմ ծնողների մոտ: Չէի ուզեմ միայնակ թողնել նրանց: Ինձ համար ամենաբանկը իմ ծնողներն են, համագյուղացիները: Գյուղում շատ անելիքներ կան: Իմ հայրենակիցները տաղանդավոր և աշխատասեր մարդիկ են: Նրանց կատարած գործերը շատերին են հայտնի: Կուզենայի նրանց կատարածին մի բան էլ ես ավելացնել, որ իմ աշխատանքով ծաղկուն ու բարգավաճ դարձնեմ գյուղն իմ:

Նառա ԲԱԼԱՅԱՆ Գ. Գիշի

ԱՅՍ ԿՈՂԸ ՈՒՅ ՈՒ ԿՈՐՈՎ Ե ՏԱԼԻՍ

Քաշաթաղի շրջկենտրոնի Բերձորի Կ. Թեքեյանի անվան հ. 1 և Կ. Չատիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցների շրջանավարտների համար 2012-ը առանձնահատուկ էր. հանդիսավորությամբ նշվեց պատմական հայրենիքի այս հատվածի ազատագրման 20-ամյակը: Նրանցից շատերը ծնվել են այստեղ, իրենց իսկ հայրերի ազատագրած հողում և ուրիշ հայրենիք չեն էլ պատկերացնում:



Վ ա ղ ո ղ ը Ն ՄՈՎՍԻՍՅԱՆ, Քաշաթաղի շրջավարջակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ:

Քաշաթաղից ուժեղ է, տոկուն: Նա, ով կարողացել է այս քան տարիներին վեր հանել, այլևս նահանջել չի կարող, միշտ պետք է առաջ գնա: Քաշաթաղի հողը կարծես ուժ ու կորով է տվել մեր երեխաներին ու կոփում է նրանց որպես ուժեղ անհատականություններ:

Եթե այս սերունդին որևէ մեկը փորձի համոզել, թե այս հողը ինչ-որ մի ժամանակ ուրիշին է պատկանել, շատ կզարմանա ու չի հավատա: Նոր սերունդն այս հողը ընկալում է որպես հայկական:

Շրջանի առաջին վերաբնակիչներից են ուսուցիչները: Այսօր արդեն ունենք վաստակաշատ ուսուցիչներ, որ պարզևստիկալ են ԼՂՀ նախագահի, վարչապետի կողմից, ստացել են մեդալներ ու շքանշաններ, արժանացել «Վաստակավոր ուսուցիչ» կոչման: «Տաշիր» հիմնադրամի խրատախոսանքին վերջերս արժանացան մեր չորս ուսուցիչներ:

Ուրախությամբ փաստեն, որ աշակերտների թիվը գնալով ավելանում է: Այս տարի շրջանում սովորողների թիվը 1756 է: Հարյուրով աճ կա՝ անցյալ տարվա համեմատությամբ: Երկու նոր դպրոց է ավելացել, մեկն էլ կավելանա նոր ուսումնականում:

Նախնական տվյալներով, հաջորդ տարի ոչ միայն աշակերտների թիվը է ավելանում, այլև որակը, բուհ ընդունվողների թիվը է մեծանում: Իսկ դա նշանակում է, որ մի քանի տարի հետո մենք կունենանք արդեն սեփական մասնագետներ, ասել է թե՛ շրջանի վաղվա օրը գիտակ ձեռքերում է: Տարեցտարի տեսանելի է այդ տարբերությունը: Այս տարի ավարտում է իմ դասողեկական դասարանը (Բերձորի հ. 1 դպրոց), 18-րդ թողարկումն է: 1994թ. սեպտեմբերին, երբ դպրոցը բացվեց, 34 աշակերտ էր սովորում: Այս տարի դպրոցն ունի 190 աշակերտ (եկող տարի կունենանք 202-ը), հ. 2 դպրոցը՝ 142 աշակերտ: Աճն ակնառու է:

Կյանքն առաջընթաց է ապրում: Ոչ թե վայրէջքներով, այլ վերելքներով ենք ապրում: Ամեն տարի մի նոր անակնկալ է սպասվում:

Հանրապետական օլիմպիադային 6 աշակերտ պարզևստիկալ է կհ գովասանագրով: Անցյալ տարի իմ աշակերտ Հովհաննիսյան Տիգրանը հաճելի անակնկալ մատուցեց. հանրապետական օլիմպիադայում պատմություն առարկայից 3-րդ տեղը գրավեց և իրավունք ստացավ մասնակցել ՀՀ եզրափակիչ փուլին ու այնտեղ էլ 3-րդ տեղը գրավեց:

Մրցանակ ենք ստացել նաև Թեքեյան մշակույթի կենտրոնից: 8-րդ դասարանից երկու աշակերտ մասնակցել է հանրապետական օլիմպիադային:

Մեզ համար էլ է հաճելի, որ մեր երեխաներն ինչ-որ տեղ ոչ թե կաշկանդվում են, որ քաշաթաղից են, այլ հպարտությամբ են արտահայտվում այդ մասին:

Շնորհավորում են մեր բոլոր շրջանավարտներին: Մաղթում են, որ նրանք կյանքի ճանապարհին հանդիպած բոլոր դժվարությունները կարողանան պատվով հաղթահարել: Կյանքը մարդուն հեշտությամբ չի տրվում: Թող ապրեն գեղեցիկ, իմաստալից: Ասում են՝ ամեն մարդ աշխարհ է գալիս իր գործն անելու առաքելությամբ: Թող իրոք, ամեն մեկն իր գործն անի՝ հանուն մեր հայրց մեծ տան բարձրացման ու հզորացման: Ցանկանում են, որ իրենց նպատակներին հասնեն և իրենց մասնագիտական կարողությունները խաղաղության մեջ ներդրեն երկրի զարգացման գործում:

Իսկ մեր շրջանավարտների հերթափոխ առաջին դասարանիցներն էլ դառնան նրանց

արժանի հետնորդները:

Տիգրան ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, հ. 2 դպրոց.
- Դժվար է հրաժեշտ տալ հարազատ դպրոցին, որը դարձել է իմ երկրորդ տունը: Այստեղ ձեռք են բերել լավ ընկերներ, ապրել ենք մի ընտանիքի նման: Ուրախացել ենք միմյանց հաջողություններով, տխրել անհաջողությունների համար: Ինչ արած, ավարտում ենք, հեռանում հարազատ դպրոցից, սակայն լավ ընկերությունը պահպանվելու է ամբողջ կյանքի ընթացքում:

Դպրոցն ինձ սովորեցրել է սիրել հայրենիքը, ծնողին, ուսուցչին, ընկերներին: Լինել բարի, հանդուրժող, համբերատար, ազնիվ: Եվ օգտվելով առիթից, ուզում եմ իմ սրտի ջերմ խոսքն ուղղել իմ ուսուցիչներին, շնորհակալություն հայտնել իրենց նվիրումի, լավ և բարի խոսքերի համար: Երազում եմ լինել մեր պատմական Հայաստանում, սեփական աչքով տեսնել իմ պապերի հողը, պատմաճարտարապետական կոթողները՝ վանքեր ու խաչքարեր, բերդեր ու կամուրջներ... Այդ է պատճառը, որ այսօր լույս մի բանի մասին եմ երազում՝ ընդուն-



վել Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժինը, որն ինձ համար հեռանկարային դռներ կբացի՝ ավելի մոտիկից զգալու և տեսնելու «Երազի երկիր Հայաստան»:

Չեմ ուզում մախորդ խոսել ապագայի մասին: Միայն կասեմ, որ ինչ մասնագիտություն էլ ընտրեմ, ինչ հնարավորությունների տեղ էլ դառնամ, կաշխատեմ գիտելիքներս ներդնել իմ երկրի կառուցման գործին: Վստահ եմ, երկիրս մի օր վերականգնելու է իր երբեմնի հզորությունը, և ես ամեն ինչ կանեմ, որ այդ երազանքը դառնա իրականություն:

Վարսենիկ ԸՈՒՅՆՅԱՆ, հ. 1 դպրոց.
Մանկությունս անցել է այս միջավայրում: Շատ են սիրում իմ Բերձորը՝ չնայած նրա բազմաթիվ թերություններին ու խնդիրներին: Այս քաղաքի հետ եմ կապված իմ լավ ու վատ հիշողություններով, և եթե անգամ տարբեր պատճառներով հետագայում այստեղ չբնակվեմ, միևնույն է, Բերձորն իմ հայրենի քաղաքն է, և ամեն առիթ կօգտագործեմ այցելել և նրան օգտակար լինել:

Մեր հերթն է եկավ: Չեմ կարողանում հավատալ, որ արդեն աշակերտ չեմ: Երբ ասում էին, որ ավարտես դպրոցը՝ կկարոտես, էլի չէի հավատում, բայց հիմա, հենց այս վայրկյանից իմ դպրոցին անչափ կարոտում եմ, կարոտում եմ ուսուցիչներին, ընկերներին և նույնիսկ դասարանս, նստարանս: Ինձ համար իմ դպրոցն աշխարհի ամենալավ կրթօջախն է: Տասներկու տարին բավարար ժամանակ է, որպեսզի ձևավորվի մարդ-անհատը, ձևավորվի նրա մտածելակերպը: Սա իմ կյանքի կարևոր հատվածն է: Այս ընթացքում ես ձեռք եմ բերել ընկերներ ու կցանկանալի միշտ միասին լինելիք: Առանց նրանց օրս չեմ պատկերացնում:

Իսկ եթե ավելի հակիրճ սովորել եմ ինչ-որ չափով ճանաչել մարդկանց, տարբերել լավը վատից:

Ամենամեծ երազանքս՝ ընդունվել իմ ցանկացած ֆակուլտետը և եթե ընդունվեմ, կծագեն դառնալ լավ մասնագետ և ինչ-որ նորություն մտցնել իմ ընտրած ոլորտում, որպեսզի իմ անունը հիշվի սերունդների կողմից, որպես մեր կյանքում ինչ-որ նոր բան մտցրած մարդու՝ ինչպես Մոնե, Սարյանը, Դալին:

Հուսամ, որ ապագայում կլինեն երկրիս արժանի քաղաքացի, շրջապատիս համար լավ մարդ, իսկ լավ մարդ և առհասարակ, մարդ լինելը շատ դժվար է: Անպայման կմնամ հայրենիքում և կնվիրվեմ այն շենացնելու գործին:

Սոնա ՍԱՐԳՍՅԱՆ, հ. 2 դպրոց.
- Ծնվել և մեծացել եմ այստեղ՝ Բերձորում, նրա առաջին երեխաներից մեկն եմ: Իմ մանկության գեղեցիկ տարիներն անց են կացրել այստեղ:

Ավարտում եմ դպրոցս՝ ընտրելով կյանքի հաստատում ուղի: Ես իմ հարազատ դպրոցից հեռանում եմ, որտեղ իմ թանկագին ուսուցիչներն ինձ հարուստ գիտելիքներ են տվել, ինչի համար շնորհակալ եմ: Այս տարիների ընթացքում ունեցել եմ հիանալի ընկերներ, որոնց հետ կշարունակեմ ընկերությունս իմ կյանքի հաջորդ շրջանում:

Այս տարիներն ինձ առաջին հերթին սովորեցրել են լինել մարդ: Շատ են ցանկանում, որ երբ ստանամ իմ ընտրած մասնագիտությունը, օգտակար լինեմ երկրիս: Իմ տեղը կյանքում ինձ շրջապատող մարդկանց կողքին է:

Էսմա ԲՈՒՏՅԱՆ, հ. 2 դպրոց.
- Բերձորն իմ հարազատ քաղաքն է, և ես իմ կյանքի շատ կարևոր հատվածը կապում եմ նրա հետ: Մնաս բարով, իմ դպրոց: Ես ողջ կյանքում կարոտով կհիշեմ քեզ և սրտի թրթիռով կայցելեմ: Դպրոցական տարիներն ինձ սովորեցրել են լինել լավ մարդ, տվել են կյանքի դասեր, գիտելիքներ ամեն ոլորտի վերաբերյալ: Անկեղծ ասած, ես առանձնահատուկ երազանքներ չունեմ: Ունեմ նպատակներ, որոնց հասնելու համար կանեմ ուժերիս ներածին չափով ամեն բան: Այժմ իմ կարևոր նպատակը բուհ ընդունվելն է: Չեմ ուզում ժամանակից առաջ ընկնել, բայց երբ ունենամ իմ սիրած աշխատանքը, ինձ թվում է, այդ ժամանակ արդեն կայացած մարդ կլինեմ և կունենամ իմ տեղը կյանքում:

Սոնա ԱԼԿԵՐԴՅԱՆ, հ. 2 դպրոց .
Մանկությունս այստեղ է անցել: Չեմք եմ բերել լավ ընկերներ, որոնցից բաժանվելը շատ դժվար է: Դպրոցում ստացած գիտելիքներս ինձ պետք կզան ողջ կյանքում: Ճիշտ է, շուտով հրաժեշտ կտանք մեր սիրելի կրթօջախին, սակայն չեմ մոռանա իմ ուսուցիչներին, դասընկերներին: Մեր շատ սիրելի ուսուցիչների շնորհիվ ձեռք ենք բերել գիտելիքներ, սովորել լինել ուժեղ, հայրենասեր: Երիտասարդը, գիտակցական կյանք մտնելով, սկսում է խորհել իր ապագայի մասին, երազում հասնել նպատակին: Ես ցանկանում եմ դառնալ պատմության ուսուցչուհի և իմ աշակերտներին կրթել հայրենասիրական գաղափարներով:

Անահիտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, հ. 2 դպրոց
Երկու տարեկանից ապրում եմ Բերձորում: Այստեղ եմ առաջին անգամ ոտք դրել դպրոց, իմ առաջին ընկերներին այստեղ ձեռք բերել: Ինչպես անցան դպրոցական տարիները՝ ինքս էլ չիմացա: Կարծես երկի էր, երբ առաջին անգամ մտա դպրոց՝ ինձ համար մի նոր ու գարնանալի աշխարհ: Այսօր մնաս բարով եմ ասում սիրելի դպրոցին, բայց ոչ ծննդավայր քաղաքիս: Այս տարիներն ինձ սովորեցրել են լինել խելացի, շփվող, ընկերասեր: Կարողանում եմ կիսվել ուսուցիչների հետ, որովհետև նրանք մեզ համար ավելին էին, քան ուսուցիչները: Երազանքի ճամփաներն ինձ տանում են դեպի Երևանի պետական համալսարանի սոցիալական աշխատանքների բաժին: Ինչ ընտրություն էլ որ կատարեմ, կաշխատեմ մեր ժողովրդի համար:

Այստեղ եմ առաջին անգամ ոտք դրել դպրոց, իմ առաջին ընկերներին այստեղ ձեռք բերել: Ինչպես անցան դպրոցական տարիները՝ ինքս էլ չիմացա: Կարծես երկի էր, երբ առաջին անգամ մտա դպրոց՝ ինձ համար մի նոր ու գարնանալի աշխարհ: Այսօր մնաս բարով եմ ասում սիրելի դպրոցին, բայց ոչ ծննդավայր քաղաքիս: Այս տարիներն ինձ սովորեցրել են լինել խելացի, շփվող, ընկերասեր: Կարողանում եմ կիսվել ուսուցիչների հետ, որովհետև նրանք մեզ համար ավելին էին, քան ուսուցիչները: Երազանքի ճամփաներն ինձ տանում են դեպի Երևանի պետական համալսարանի սոցիալական աշխատանքների բաժին: Ինչ ընտրություն էլ որ կատարեմ, կաշխատեմ մեր ժողովրդի համար:



Սիրվարդ ԹԱՄԱԶՅԱՆ, տարրական դասարանների գծով տեսուչ:

Տարիներ առաջ վառվելով երազներով մտա Քաշաթաղ: Առաջին անգամ իմ երեխայի ձեռքից բռնած՝ զննեցի Բերձորի հ. 2 դպրոց: Ես ընդունեցի առաջին դասարան՝ 18 աշակերտով: Առաջին անգամ չէի դասարան մտնում, բայց Քաշաթաղում դա առաջինն էր: Մանկանց աշխարհում աշխատեցի սիրով, նվիրվածով, մեծ պատասխանատվությամբ:

Այսօր իմ առաջին դասվարական դասարանն է ավարտում: Ես հպարտ եմ, որ Քաշաթաղում արդեն սերունդ են տվել, և իմ ցանած սերունդը ծլարձակվում են:

Ու թե իմ տնկած շիվերից մի օր ես պտուղ քաղեմ,

Անշուշտ, այդժամ երջանիկ կլինեմ: Հիմա եկել է իմ երջանկության պահը: Համոզված եմ, իմ շրջանավարտները լավ մասնագիտություն կստանան, բարձրագույն հաստատություններ կընդունվեն, շատերն արհեստներ կընտրեն: Վստահ եմ, որ լավ մարդ կդառնան:

Համեմատելով 11 տարի առաջվա կյանքի հետ՝ տեսնում ենք, որ շրջանը բավական մեծ վերելք է ապրել: Հիմա Բերձորում կյանքն ուրիշ է, այլ աչքերով, այլ գույներով, այլ երանգներով ենք տեսնում:

Այն ժամանակ, բնականաբար, նաև երազում էինք այս օրը: Եվ կարող ենք ասել, որ իրականացել է մեր երազանքների մի փուլը, անշուշտ, շատ դժվարությունների հաղթահարման գնով:

Արդեն կարող ենք նաև ձեռքբերումների մասին խոսել: Այս տարի մեր շրջանի երեխաները երեք կարևորագույն մրցույթի են մասնակցել: Վերջերս Ընթերցանության հանրապետական մրցույթում Երևանից մեր թիմը՝ Գետամեջի դպրոցի աշակերտները, վերադարձավ պատվոգրով: «Կենդուրու»-ից չորս հատուկ մրցանակ ունենք: «Թունանյանական շաբաթ»-ին և «Էդիթ արինտ»-ի կարգակետով պատվոգրեր ենք մասնակցել և պարզևստիկալ պատվոգրերով: Հաջողություններ ունենք նաև մարզական բնագավառում:

Ինչ-որ մի կանչ կա, որ մեզ ստիպում է լավ աշխատել, ամուր մնալ: Մեր նախնիների, մեր գոհված տղաների ձայնն է դա, որ մեզ հորդորում, պարտադրում է ամուր կառչել այս հողին, աճել, բազմանալ: Եվ մենք չենք կարող դա չանել:

Ես չեմ մտածել, որ հնարավոր կլինի երբևէ ապրել Քաշաթաղում ու մեր կյանքի լավագույն տարիները նվիրել նրա բարգավաճմանը: Մենք արդեն մի մասնիկ ենք դարձել այս հողի: Որդիս ծառայում է հայրոց բանակում: Վաղը-մյուս օրը պիտի գա ու Քաշաթաղի դպրոցներից մեկում կաշխատի, կդասավանդի ֆիզկուլտուրա: Թողնիկս այս ուսումնականում 1-ին դասարան է գնալու: Անչափ ուրախ եմ, որ իսկապես արմատներ ենք ձգել այստեղ:

ՍԵՐՈՒՆԴ

ՏՈՆ ՀՐԱԺԵՇՏԻ ԱՎԵՏՄԱՆ

Ասում են՝ այս աշխարհում ծեղանուն են անգամ ծառերը, բայց դու ամեն աշնան հետ մանուկներով ես լցվում, մանկանուն նրանց հետ, համակվում նրանց խիղճով, երիտասարդանուն՝ դառնալով դպիր ու դարբնոց:

Այս խոսքերով, թերևս, կարելի է բնութագրել մի օջախ, ինչը տարիներ շարունակ հայրենի տուն, մայրական գորովանք, այբբենարան, իմաստուն դպիր, մեծ ու սուրբ ճամփի այգաբաց և հրաշագործ փարոս է եղել:

Մայիսի 25-ին հուզումնալից տոն էր Մարտունու հ. 2 հիմնական դպրոցում: Հրաժեշտի տոն, որն ավետում էր աշակերտների իննամյա կրթության ավարտը: Երաժշտության հնչյունների ներքո շրջանավարտները հրավիրվեցին հրապարակ, հնչեցին նրանց անուն-ազգանունները: Իններորդիներին ուղղված՝ բացման խոսք ասաց դպրոցի ՄԿԱԳ փոխտնօրեն Ալվարդ Ահարոնյանը:

Հնչեց ԼԳՅ օրհներգը: Առաջինը շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք հղեց դպրոցի տնօրեն Էլմիրա Մուսայելյանը:

Շրջանավարտների շնորհակալական ու երախտագիտության խոսքերը հիմնականում ուղղված էին ի-

րենց կյանքի ուղեկից դարձած ուսուցիչներին: Մարդիկ, ովքեր տարիներ շարունակ դպրոցի կամարների ներքո հնչեցնում էին գիր ու գրականություն, անսպառ համբերությամբ լուսավորում իրենց սաներին, բացում նրանց աչքերը, կրթում, դաստիարակում, փոխարինում իրենց ծնողներին և այսօր ճանապարհում կյանքի հաջորդ համգրվան:

Շնորհավորական ելույթներով հանդես եկան 9-րդ դասարանիների դասղեկներ Կ. Հովսեփյանն ու Ի. Դանիելյանը, ովքեր, ներկայացնելով օրվա խորհուրդը, ընդգծեցին, որ այն ամենքի համար կմնա որպես բարի ու անմոռաց հուշ: Նրանք միաժամանակ խիղճով առջեցուն կանաչ ուղի մաղթեցին օրվա հերոսներին:

Իններորդիները երախտագիտության խոսքեր հղեցին իրենց սիրելի դասավարտներ Մելանյա Մանգասարյանին և Գայանե Գրիգորյանին, ովքեր իրենց ծեղքի բռնած, սովորեցրել են հայոց ոսկեղենիկ տառերը և ինը տարիների ընթացքում մշտապես կապված են եղել իրենց հետ:

- Դուք մեր կյանքի մեջ մտաք մեր սերտած առաջին տառի հետ ու ընդմիշտ կմնաք այնտեղ, ձուլվեցիք

մեր ելույթները, դարձաք մեր ամենավճիտ ակունքը, միախառնվեցիք մեր մանկության օրերին, այբ, բեն, գիմ-ի հետ խառնվեցիք մեր արյան հոսքին և դարձաք մեր անտես ուղեկիցը,- ասացին 9-րդիցիները:

Շրջանավարտներին շնորհավորեցին նաև 8-րդ դասարանի աշակերտուհի Նարե Հայրապետյանը և ծնող Անահիտ Արզումանյանը:

Հրաժեշտի արարողությունը 9-րդիցիների կողմից համեմվեց հունորային կատարումներով:

Աշակերտների և ուսուցիչների հետ միասին հուզված էին և ծնողները, քանի որ իրենց զավակները մեծացել, պատանի են դարձել և պատրաստ են նվաճել նոր բարձունքներ: Ճիշտ է, նրանք դեռ դպրոցական կլինեն, գուցե չեն հրաժարվի իրենց չարածիճիկություններից, սակայն այդ պահին նրանք ասես մեծացել, հետադարձ հայացքով էին նայում իրենց մանկության տարիներին: Այդ օրվանից փակվեց նրանց դպրոցական կյանքի առաջին էջը՝ տեղը զիջելով հաջորդին:

ժամանակն է ասելու՝ մնաք բարով: Եղեք առողջ ու երջանիկ, քանզի մեր հայրենիքի գալիք հպարտությունը դուք եք:

**Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ
ք. Մարտունի**

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ

Վերջին անգամ զիլ զնգում ես, դողանջում ես մեզ համար, Ձիլ դողանջո, զրնգոցո սուրբ պատգամ է մեզ համար, Քանի՜ սերունդ քո զնգոցով կյանքի ճամփա է մտել, Մենք զնուն ենք, մնա՛ս բարով, զանգ, դողանջիդ մեզ համար:

Մնա՛ս բարով, դու իմ օրրան, քեզ դեռ շատ են կարոտելու, Շվար կանգնել ճամփի միջին, չգիտեմ ինչ են անելու, Ետ թռչեին տարիները, ու ես նորից մանկանայի, Մնա՛ս բարով, իմ ուսուցիչ, առանց քեզ ո՞նց են անելու...

Մնա՛ք բարով, իմ ընկերներ, գուցե էլ չենք հանդիպելու, Կյանքը խաղ է, չի իմացվի, անհուն է գաղտնիքը աշխարհի, Ուր էլ լինեմ, երգվում եմ ես, տեր կկանգնեմ իմ Արցախին, Մնաս բարով քեզ չեն ասում, Արցախ, հող իմ հայրենի...



**Է. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ
Սպեփ. հ.12 դպրոցի փոխտնօրեն**



ՊՈՂԱՆՁ ՀՐԱԺԵՇՏԻ ԿԱՄ՝ ԴԱՍ ՆՎԻՐՈՒՄԻ ՈՒ ՈԳԵՇՆՉՄԱՆ

Մայիսի 25-ին Արցախի աշխարհում հերթական անգամ դողանջեց դպրոցական վերջին զանգը:

Վերջին զանգի արարողությունը այս տարի առանձնահատուկ շուքով մշվեց Հացու հարյուրամյա տարելիցը բոլորած հիմնական դպրոցում: Այն մշվեց որպես ոգեշնչման, ավանդույթների պահպանման, ազգի նվիրյալ զավակների կերպարների բնութագրման, բաժանման ու մի նոր աշխարհի հետ հանդիպման դրոշմ:

Իններորդ դասարանի դասղեկ Արմինե Սարգսյանի կազմակերպած վերջին զանգը ավելի շատ ասես նվիրումի ու ոգեշնչման բաց դաս լինեց:

Այդ օրը տոնական էր ողջ համայնքի համար, դպրոցի բակը՝ առավել քան մարդաշատ: Ներկա էր գրեթե ողջ գյուղական հասարակությունը՝ գյուղապետ Ա. Ղազիյանի ղեկավարությամբ:

Այն, որ դպրոցը գյուղի համար սուկ կրթօջախ չէ, իր համեմատա-

ցիչների տված անկախության ու ազատության դասերը նրանք սերտել են գերազանց:

Հիշեցին Արցախյան հերոսամարտի նվիրյալ զավակներին, մեր համագյուղացի նահատակներին, դիպուկահար Մարգարիտա Սարգսյանին, բոլոր նրանց, ովքեր չեն վայելել վերջին զանգի դողանջները, զենք են վերցրել, հայրենիք պաշտպանել, որ խաղաղության առաջին ու վերջին զանգերը դողանջեն մեր կրթօջախներում:

Միջոցառումն ուներ նաև ասումների, երգի ու հումորի մաս՝ հայերեն ու ռուսերեն լեզուներով, որը վարպետորեն ներկայացրին աշակերտները:

Վերջին զանգին նախապատրաստվել էին նաև չորրորդ դասարանիցները (դասվար Հասմիկ Խաչատրյան): Նրանք նույնպես գեղեցիկ ասումներով, երգերով հրաժեշտ տվեցին տարրական դպրոցին, սիրելի ուսուցիչներին:

Վերջին զանգի կապակցու-



բար նեղ ուսումնարաստիարակչական խնդիրներով, փաստվեց ևս մեկ անգամ:

ժամանակի մեքենայով մեր աչքի առաջ հառնեցին պատմական ու ժամանակին թագավորական կարգավիճակ ունեցող գյուղի 5-րդ դարի դրվագները՝ համապատասխան դեկորացիայով (մտահղացումը՝ Գեղանուշ Սարգսյանի): Դպրոցի բակում տեղադրված հուշադրությունի մոտ հանդիպեցին Վաչագան Բարեպաշտ թագավորը ու նախընտր աղջիկ Անահիտը:

Ավանդույթների պահպանման գործում, կարծում են, այս սերունդն ավելի հետևողական է լինելու: Իրավ է, ժամանակները փոխվում են, դրանց հետ՝ նաև ազգային մտածողությունը: Բայց մեր երեխաները ցույց տվին, որ հայրենիքի պահպանման ու ամրապնդման գործը միշտ էլ անփոփոխ առաջին հորիզոնականի վրա է: Երևաց, որ գիտելիքների հետ մեկտեղ ուսու-

թյամբ իններորդիցիներին իրենց հրաժեշտի խոսքն ասացին տողերիս հեղինակը՝ որպես տնօրեն, դասղեկ Ա. Սարգսյանը, ծնող Ս. Բալայանը:

Այսօր էլ, ինչպես դարեր առաջ, դպրոցը, հատկապես գյուղական, կարևոր դեր է խաղում մշակութային ավանդույթների պահպանման ու սերունդներին փոխանցման և դրանով իսկ ազգի հավաքական գիտակցության զարգացման ու ինքնաճանաչման համար:

Ցանկանաք, որ մեր շրջանավարտները դառնան Արցախի աշխարհի արժանի զավակներ, կցվեն մեր պետականության կայացմանը, հզորացնեն մեր երկիրը, միշտ և ամենուր բարձր պահեն հայի անունը:

**Սուսաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հացու հիմնական դպրոցի փոխտնօրեն**



ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

ՓՈՂԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ամփոփվեցին «Կենդանու-2012» մաթեմատիկական մրցույթի արդյունքները: «Այբ» կրթական հիմնադրամի ծրագրերի ղեկավար Շուշան Կարպետյանի մասնակցությամբ ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում մայիսի 24-ին տեղի ունեցավ մրցանակների հանձնման հանդիսավոր արարողություն:

Մրցույթի հաջող անցկացման և լավ արդյունքներ ցուցաբերելու կապակցությամբ մասնակիցներին շնորհավորեց ԼՂՀ կրթության և գիտու-

ծրագրի ղեկավար Շ. Կարպետյանը իր գոհունակությունը հայտնեց Արցախում կազմակերպչական բարձր մակարդակ և ցուցանիշներ հանդես բերելու համար: Մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 35672: Նրանցից հինգը ճանաչվել են հաղթող՝ բոլորն էլ 33-ից: 1201 հոգի մրցանակակիր են, որոնցից 456-ը գրանցել է լավագույն արդյունք: Նրանցից 8-ը Արցախից են՝ Արթուր Սահակյան (Շուշիի Խ. Աբովյանի անվ. դպրոց, 7-րդ դաս.), Վիկտորյա Միրզախանյան, Ստեփ. Կ. 1



թյան փոխնախարար Սլավա Ասրյանը: Երրորդ տարին Արցախում անցկացված «Կենդանու» մասնակցել են 3-12-րդ դասարանների ավելի քան 1400 դպրոցականներ: Նշենք, որ «Մաթեմատիկա՝ բոլորի համար» հետաքրքիր մրցույթին մասնակցել ցանկացողների թիվն Արցախում, ինչպես ամբողջ աշխարհում, տարեցտարի մեծանում է: Այսպես, առաջին տարում մասնակցել է 120 երեխա, երկրորդ տարում՝ 608, իսկ այս տարի՝ նախորդից երկուսուկես անգամ ավելի: Հիշեցնենք նաև, որ սկզբում ընդգրկված էին միայն մայրաքաղաքի դպրոցները, իսկ այս տարի՝ նաև շրջկենտրոնների ու ենթաշրջանների կրթօջախները՝ թվով 36: Ս. Ասրյանի հավաստիացմամբ՝ հաջորդ տարի կընդգրկվեն բոլոր դպրոցները, որովհետև, իրոք, դպրոցականները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում մրցույթի նկատմամբ, ու սա նաև լավագույն միջոց է, որն աշակերտներին նպաստակառնողում է մաթեմատիկայի մեջ խորանալու: Կազմակերպիչները հետաձուտ են եղել, որ ամեն ինչ կարգին համապատասխան անցկացվի: Դա վերաբերում է ինչպես «Կենդանու» միջազգային մրցույթի հայաստանյան գրասենյակի, այնպես էլ Արցախի ԿԳ նախարարության աշխատողներին, և այդ կապակցությամբ կրթության և գիտության փոխնախարարը շնորհակալական խոսք ուղղեց նրանց:

հիմն. դպր., 6-րդ դաս.), Վիդեա Գրիգորյան (Ստեփ. Կ. 9 հիմն. դպր., 4-րդ դաս.), Էլեն Զամբարձունյան (Ստեփ. Կ. 5 հիմն. դպր., 4-րդ դաս.), Էրիկ Զայրիյան (Ստեփ. Կ. 2 հիմն. դպր., 4-րդ դաս.), Լևոն Զովսեփյան (Ստեփ. Կ. 1 հիմն. դպրոց, 4-րդ դաս.), Արեն Միրզոյան (Ստեփ. Կ. 2 դպրոց, 4-րդ դաս.), Ալեքսանդր Շահրամանյան (Ասկերանի միջն. դպր., 4-րդ դաս.): Նրանք պարգևատրվեցին պատվոգրով: 27 հոգի արժանացան հատուկ մրցանակի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից: Մասնակից դպրոցներից և ոչ մեկը չմնաց առանց մրցանակի: Կարևորն այն է, որ և միջին, և կրտսեր, և բարձր օղակի երեխաներ էին պարգևատրվածների ցանկում: Նման մրցույթները նպաստում են բնագիտական առարկաների դրվածքին. կրթության և գիտության փոխնախարարի տպավորությամբ՝ առաջին հերթին մաթեմատիկա առարկայի իմացության աստիճանն է ստուգվում ու նաև՝ ընդհանուր տրամաբանությունը, և համեմատության մեջ դնելով, օրինակ, առարկայական օլիմպիադայի հետ, նկատելի է առաջընթացը. բոլոր թիմերն էլ մասնակցել են 33 օլիմպիադայի եզրափակիչ փուլին, և նրանց 50 տոկոսը դիպլոմի կամ գովասանագրի է արժանացել:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԿԱԿՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ ՊՍԱՎԻ ԳՈՐԾ Է

Վերջին հրահանգավորումները քննություններից առաջ

Պետական ավարտական, ավարտական և միասնական քննությունների նախօրեին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը և զենահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի Քարամյանը հրավիրված խորհրդակցությունում վերջին հրահանգավորումները տվեցին քննական կենտրոնների ղեկավարներին, նախարարի լիազորներին և ԳԹԿ ներկայացուցիչներին՝ պարզաբանումներ տալով ԼՂՀ կառավարության կողմից հաստատված քննությունների կարգերի և դրանցից բխող ընթացակարգի ու աշխատակարգի վերաբերյալ: Բոլոր այդ իրավական փաստաթղթերը, կրթության պատասխանատուների հավաստիացմամբ, ժամանակին ուղարկվել են դպրոցներ, հասցվել քննությունների հետ կապված գլխավոր անձանց գիտակցությանը, բայց չնայած դրան, մի վերջին անգամ անդրադարձան այդ հարցերին:

Խորհրդակցությունն ընթացավ ԼՂՀ ԳԹԿ-ի կողմից ապրիլ ամսում 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացված փորձնական քննությունների ժամանակ ի հայտ բերված հիմնական թերությունների (որոնց ժամանակ ընթացակարգի պահանջները չեն պահպանվել, և արդյունքում տուժել է աշակերտը) և դրանց վերացման ուղիների, 2011-2012 ուստարվա պետական ավարտական և ավարտական քննությունների քննական կենտրոններում կազմակերպման, անցկացման և գրավոր աշխատանքները ԳԹԿ ուղարկման կարգի, նախարարի լիազորների, ԳԹԿ ներկայացուցիչների աշխատակարգի հիմնական դրույթների շուրջ, որոնց առնչությամբ պարզաբանումներով հանդես եկավ ԼՂՀ ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը:

Նրա խոսքով, քննությունների անցկացման կարգի պահանջների ճիշտ կատարումից կախված է լինելու քննությունների արդյունավետությունը: Փորձնական քննություններն անց են կացվել հիմնականում առանց լուրջ խախտումների: Նա կանգ առավ այն թերությունների վրա, որոնք կարող են պատճառ հանդիսանալ աշակերտների գնահատականների սխալ նշանակման կամ իջեցման: Բոլոր դպրոցների տնօրենները՝ քննական կենտրոնների ղեկավարները, ԳԹԿ-ի կողմից ամփոփ տեղեկատվություն են ստացել փորձնական քննությունների ժամանակ ի հայտ բերված թերությունների վերաբերյալ, սակայն ԳԹԿ տնօրենը մեկ անգամ և նրանց առջև հանգամանակից բացատրություններով հանդես եկավ՝ բացառելու համար այն բոլոր հնարավոր դեպքերը, որոնց պատճառով կտուժի աշակերտը: Նա պարզաբանեց, թե ինչու չպետք է խմբի շրջանավարտների ցուցակ-արձանագրությունը լրացված լինի մինչև շրջանավարտների մուտքը քննասենյակ, ինչ է լինում, երբ քննության ընթացքի կազմակերպիչները պատասխանների ձևաթղթում խմբում շրջանավարտի համա-

րի փոխարեն նշում են նստարանի համարը կամ պատասխանների ձևաթղթերը աշակերտներին տրամադրում են թեստերի հետ միասին, քննական կենտրոնի նախարարի հերթապահի մոտ չի կատարվում աշակերտների վիճակահանություն խմբերի որոշման նպատակով, թեստերի վրա չեն նշվում քննասենյակի և նստարանի համարները: Ինչու չի կարելի, որ թեստերի վրա աշակերտները գրեն անուն-ազգանունները, քննական կենտրոններից պատասխանների ձևաթղթերի ծրարները բաց վիճակում ուղարկվեն ԳԹԿ: Չնայած 12-ամյա ուսուցման շրջանավարտներն արդեն 18 տարեկան են, սակայն նրանց մի մասը դեռ չունի անձնագիր, որը, ինչպես գիտենք, տրվում է 16 տարեկանից: Դա, իհարկե, ծնողի թերությունն է, թեպետ դպրոցի կողմից բազմաթիվ հիշեցումներ են եղել այդ մասին, քանզի քննասենյակի մուտք թույլատրվում է միայն անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով կամ ծննդյան վկայականով: Այս հարցի հետ կապված հետագա թյուրիմացությունները բացառելու համար, նպատակահարմար, իհարկե, հայտագրման պահին անձնագիր ունենալն է: Մյուս տարի այս հարցն ավելի խստությամբ կդրվի: ԳԹԿ տնօրենը ի հայտ բերված թերությունների մեջ նշեց նաև ավարտական դասարանում սովորելու վերաբերյալ տրամադրված տեղեկանքներն առանց լուսանկարի լինելը (հնարավոր է՝ տվյալ աշակերտի փոխարեն մեկ ուրիշը ներկայանա քննության), քննության սկիզբը աշակերտների՝ մուտքի սկզբի հետ շփոթելը: Քննության սկիզբ՝ նշանակում է, որ բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարված են, և աշակերտները սկսում են թեստերի առաջադրանքների կատարումը: Աշակերտների մուտքի սկիզբը որոշում է քննական կենտրոնի ղեկավարը՝ հաշվի առնելով շրջանավարտների քանակը, որպեսզի քննությունն սկսվելուց 20 րոպե առաջ նրանք տեղավորված լինեն քննասենյակում: Պատասխանների ձևաթղթում բազմաթիվ ջնջումները և այլ մասնակի թերությունները գերադասելի է, որ չլինեն ու պատճառ դառնան գնահատականների իջեցմանը:

ԳԹԿ տնօրենը հիշեցրեց, որ կարգը խստացվել է. եթե աշակերտի՝ դեստոնե մայելու, խոսելու համար զգուշացում է տրվում, ապա արտագրության կամ բջջային հեռախոսից օգտվելու դեպքում միանգամից, առանց զգուշացվելու հեռացվում է քննական կենտրոնից: Բոլոր քննական կենտրոնները հնարավոր չէ ապահովել խլացուցիչներով, այդ իսկ պատճառով հարցին խստորեն են մոտենում: Ընդհանրապես արգելվում է բջջային հեռախոս քննական կենտրոն տանելը, բայց եթե ինչ-որ կերպ շրջանավարտին հաջողվի, ապա բացահայտվելու դեպքում ահա այսպիսի պատիժ է սպասվում նրան:

Առաջին հարցը, որի վրա խորհրդակցության մասնակիցների ու-

շաղրությունը հրավիրեց ԼՂԿ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը՝ պահանջելով տարածել հանրության շրջանում, այն էր, որ միասնական քննությունների պահանջվող նվազագույն շեմը՝ 7,5 միավոր, այլևս չի իջեցվելու, մի բան, որ արվում էր նախորդ տարիներին՝ ելնելով բարեփոխումների քաղաքականությունը սահուն ներդնելու և ինչու չէ՞ նաև ռիսկայնությունը բացառելու պահանջից: Այլևս չեմի իջեցում չի լինի՝ վստահեցրեց նախարարը՝ պնդելով, որ բուհ պետք է ընդունվեն միայն նրանք, ովքեր ունեն բազային գիտելիքներ:

Երկրորդ կարևոր հրահանգավորումը. հանրությունը պետք է լավ տեղեկացված լինի, որ «Կրթության մասին» և «Բարձրագույն կրթության մասին» ԼՂՀ օրենքներում կատարված փոփոխություններով դեպի բակալավրիատի ծրագիր տանող դաշտը հավասարեցված է: Կառավարության որոշմամբ՝ միասնական քննություն են հանձնելու թեպետական, թե մասնավոր բուհ ընդունվողները, այսինքն՝ անկախ բուհի սեփականության ձևից, ընդունելությունը կատարվելու է միասնական քննությունների արդյունքներով՝ ԳԹԿ-ի կողմից տրված վկայագրի հիման վրա: Պահանջը միանշանակ այսպիսին է առկա ուսուցմամբ ընդունվողների համար, իսկ հեռակայի մասով քննարկումներ են ընթանում: ԿԳ նախարարն անձամբ տրամադրված է, որ բոլորը միասնական քննությունների արդյունքներով լինեն:

Վ. Խաչատրյանը պահանջեց քննությունները կազմակերպել հավուր պատշաճի, առավելագույնս օբյեկտիվություն ցուցաբերել: Քննական կենտրոնի ղեկավարը պետք է առաջնորդվի ընթացակարգով և բոլոր պահանջների կատարման մեջ լինի հետևողական: Ճիշտ է, քննական կենտրոնում վերահսկողություն է իրականացնում ոչ մասնագետը, որն ի վիճակի չէ տեղում օգնություն ցուցաբերել: Բայց ինչի է նման, երբ նրա օբյեկտիվությամբ շրջանավարտները, իբր պետքերի համար, դուրս է գալիս քննասենյակից՝ իր հետ տանելով հարցերը և վերադառնում պատասխաններով: Անկասկած, նա վերջում ծոփաղում է քննություն կազմակերպողների վրա՝ թույլ վերահսկողության համար ու այդպիսով ցեխ շարտում ամբողջ համակարգի վրա: Դե իսկ քննության ժամանակ շրջանավարտների միմյանց հուշելն էլ պարզապես անտրամաբանական է. չէ՞ որ նրանք մրցակիցներ են: «Քննությունները պետք է կազմակերպվեն հավուր պատշաճի. դա ձեր և բոլորիս պատիվն է», - սառ ԿԳ նախարարը՝ կոչ անելով տեղերում բարձր զգոնություն ցուցաբերել՝ իր՝ որպես ամենաբարձր պատասխանատուի կողմից խոստանալով 100 տոկոսանոց գաղտնիություն ապահովել և տեղեկատվության արտաժողով թույլ չտալ: Մնում է, որ տեղերում էլ բարձր կազմակերպվածության մակարդակ լինի:

ՕԼԻՄՊԻԱԴԱՆՆԵՐԻ ՎԵՐԳԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Արցախից դպրոցականները հաջողությամբ են հանդես եկել դպրոցական առարկայական օլիմպիադայի 33 եզրափակիչ փուլում: 7 դիպլոմ, 14 գովասանագիր. ահա այս տարվա մրցանակները:

Մեկ հոգի՝ Ասկերանի շրջանի Խաչմաչի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Էլլադա Խաչատրյանը, արժանացել է 1-ին կարգի մրցանակի պատմություն առարկայից: Նույն առարկայից 2-րդ կարգի մրցանակ է արժանացել Ժենյա Զարուբյանյանը (Ղուզե ճարտարի հիմն. դպր., 9-րդ դաս.), 3-րդ կարգի մրցանակի՝ Նարեկ Միրզոյանը (Ֆիզմաթ դպրոց, 10-րդ դաս.):

2-րդ կարգի մրցանակակիրներ են դարձել Անետա Մանգասարյանը (Ասկերանի շրջ., գ. Խնապատ, 10-րդ դաս.) հայոց լեզու առարկայից և Արթուր Աբրահամյանը (Մարտունու շրջ., գ. Զեբեր, 12-րդ դաս.) աշխարհագրություն առարկայից):

3-րդ կարգի մրցանակակիրներ են Անուշ Ղահրամանյանը (հ. 11 ավագ դպր., 12-րդ դաս.), Վարդանուկ Տիգրանը (հ. 11 դպր., 11-րդ դաս.):

Ստեփ. Լրավորյան

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԹՈԴ

ՎԻՐՏՈՒԱԼ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՁԵՎ

Հաշվի առնելով ժամանակի պահանջները՝ շատ կարևոր է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական գործընթացում:

Лабораторная работа №5. Измерение выталкивающей силы.

Цель работы: определить выталкивающую силу, действующую на тело, погруженное в воду.

Тело №	V, мл	P ₀ , Н	P ₁ , Н	F _л , Н	P _{выт} , Н
1					
2					
3					

1. Погрузите маленький алюминиевый цилиндр в измерительный стакан и определите его объем V.

2. С помощью динамометра измерьте вес этого цилиндра в воздухе P₀.

3. Измерьте вес цилиндра, полностью погруженного в воду P₁.

4. Повторите измерения для двух других тел.

5. Результаты измерений занесите в таблицу.

վական տեխնոլոգիաների կիրառմամբ: Դասի թեման Արքիմեդի ուժի չափումն էր: Աշակերտները վիրտուալ լաբորատորիայում փորձի կատարման միջոցով պետք է չափեին Արքիմեդի ուժը: Նախ լուսածրիչի միջոցով աշակերտները ծանոթացան Արքիմեդի կյանքին և գիտական գործունեությանը: Ֆիզիկայի ուսուցչուհի Ա. Քոսակյանը հարցերի միջոցով ամփոփեց դասը: Այնուհետև յուրաքանչյուր աշակերտի տրամադրվեց վիրտուալ լաբորատորիա, որը նախօրոք տեղադրված էր համակարգիչների մեջ:

Այդ լաբորատորիայում աշակերտի տրամադրության տակ էին փորձի կատարման համար անհրաժեշտ սարքերը և նյութե-



րը, որոնց ընտրությունը կատարվում էր մկնիկի օգնությամբ: Տեղադրված էր նաև փորձի արդյունքների գրանցման համար նախատեսված աղյուսակ, որտեղ աշակերտները լրացնում էին փորձի արդյունքները, նաև հնարավորություն ունեին օգտվել ցուցումներից, բանաձևերից: Փորձի կատարման ավարտից և տվյալների ստացման արդյունքներից աշակերտները կատարեցին եզրակացություններ, ըստ որի՝ սահմանեցին Արքիմեդի օրենքը:

Ուսուցման այս մեթոդը ավելի գրավիչ է աշակերտների համար, նրանց հետաքրքրությունը գրքային հարթությունից անցավ համակարգչային մակարդակի: Այս մեթոդի կիրառմամբ հնարավոր է լաբորատոր փորձեր կատարել նաև իրական լաբորատորիայում նյութերի և սարքավորումների բացակայության պայմաններում:

Ա. ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Քաշաթաղի շրջակի
Բերձորի հ. 1 դպրոցի ուսուցչուհի

Էլեկտրոնային ուսումնական նյութերը, լրացնելով ուսուցման ավանդական ձևերին, ուսուցումը դարձնում կործնեն ավելի մատչելի, հետաքրքիր և արդյունավետ:

Այսօր 16-ին Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 դպրոցի ինֆորմատիկայի կաբինետում 7-րդ և 10-րդ դասարանների աշակերտների հետ անց կացվեց ֆիզիկայի դաս՝ տեղեկատ-

Քառ ու բան

ԱՐՁԱՆՅՈՒՆ ԲԱՌԱՍՏԵՂԾ

սկիզբը՝ 3-8 համարներում

- ԿՅԵՓ – 1.Գաբ: 2.Ուսուցչի ծնկներից վերը, ազդր:
- ԿՁԿՎԵԼ – Բարկանալ, ջղայնամալ:
- ԿՁԿՎՈՑ – Բարկություն, ջղայնություն:
- ԿՁԿՎՑԵԼ – Բարկացնել, ջղայնացնել:
- ԿԸԿԴ – Կենտ:
- ԿԸԿՊԿԿ – Մեմակ:
- ԿԸԿԵԼ – Կարտոֆիլի հողը փխրեցնել:
- ԿԸԿԵԼ – 1.Շիվը ելուստներից մաքրել: 2.Ախորժակով ուտել:
- ԿԸԿՉՄԸԼՉՈՒԿ – Ուտելի կանաչի մի տեսակ:
- ԿՅԸՇԸԿՅՐՈՂ – Շատ տգեղ, այլանդակ:
- ԿԸԿԵՉԱՆ – Կեռ ծայրով ձող:
- ԿԸԸԿՅԱՔԻ – Կեռ պոչով թունավոր միջատ:
- ԿԸԸԿՈՒ – Ծեր, գառանյալ:
- ԿՅՈՒԸԿՅԱՐԻ – Գարնանը հասնող գարի:
- ԿԸԸԿՅԱՐԻ – Բորոտ, բազմոտանի թրթուր:
- ԿՅԸԸԿՅԱՐԻ – Աղի:
- ԿԸԸԿՅԱՐԻ – 1.Անասնակերի մնացորդ: 2.Անպետք բաներ: 3.Երեխաներից վերջինը:
- ԿԻԼՏԻ – Թվապատ:
- ԿՅԻՆԱՅՈՒՆ – Դաշտային բույսի տեսակ, որի ցողունները թթու են դնում:
- ԿԻՐԵԻ – 1.ժլատ: 2.Ազահ, անկուշտ:
- ԿՅԻՑ – 1.Երկու ձեռքերի ափերը կցելուց գոյացած գոգավոր փոս, մեծ բուռ: 2.Կիցի պարունակությունը իբրև չափ:
- ԿԻՑԿ – Կից:
- ԿԼԱՓ – 1.Կոկորդի, ոսկորի բերան, երախ: 2.Խնոտ, դուռն, կզակ:
- ԿԼԱՓԵՆ ՏԱԼ – 1.Բերանը բացուխտի անել ուշագնացության կամ մեռնելու ժամանակ: Ուտելու կամ խմելու սաստիկ պահանջ զգալ: 3.Մեկին ունենալու, նրա հետ ապրելու բուռն ցանկություն ունենալ:
- ԿԼԻԵԼ – Սպառվել, վերջանալ:
- ԿԼԻՑՆԵԼ – Սպառել, վերջացնել:
- ԿԼԻԳԵԼ – Ճաշի ամանը ուտելով մաքրել:
- ԿԼՈՒ-ԿԼՈՒ – Լիքը, բերմբերան:
- ԿԾԵՅՆԸ – ճկույթ:

- ԿԾԸԽՐԵԼ – Տխրել, տրամադրությունը ընկնել:
- ԿԾԸԿԵԼ – 1.2հնձվելուց արտը փչանալ: 2.(փխբ.)Աղջիկը ժամանակն չամուսնանալը:
- ԿԾԸՊՈՒՐԻ – Ուժեղ, եռանդուն, գործունյա:
- ԿՅՈՒԼ – Գոմ:
- ԿԸԸՄԹԵԼ – Կսմթել:
- ԿՄԱՆ – Բացի:
- ՅԱՏԵ – Այ, այդ է:
- ՅՐԱՅԱԿ – Ազատ, ընդարձակ:
- ՅՐԱՎԱՍԿ – Հավաքված սեր, մածուն խնոցի հարելու համար:
- ՅՄՓՈՒԵԼ – Բռով վերցնել:
- ՅՄՓՈՒԻ – Բուռ:
- ՅԵԿԵ – Դեռահաս ցորենի աղանձ:
- ՅԵՉ – Բնակ, ամենևին ոչ:
- ՅԵՈ – 1.Եռալը: 2.Ցավ: 3.Ձող:
- ՅԵՈՒԼ – Ցավել, կսկծալ:
- ՅԵՏ – Անգամ:
- ՅԵՏԵ – 1.Համար: 2.Անգամ:
- ՅԵՐԵ – Կենդանիների առաջին ազդրերի վերին մասը, թիակ:
- ՅԵՐՈՒ – Անցյալ տարի:
- ՅԸՐՈՒ – Բեղմնավորելու պատրաստվող ցուլին քաջալերող բացականություն:
- ՅԹԵԹԱ – Սպառնալիք:
- ՅԻՇՏԱՄ – Երանի թե:
- ՅԴԵ – Ճանապարհ:
- ՅՈՒԹ – 1.Կոտրված կավե ամանների թզաչափ տակը: 2.Խալի համար փորած փոս:
- ՅՈՒՄԱՌ – Շատախոս:
- ՅՈՒՄԱՐ – 1.Պատրաստական: 2.Համաձայն:
- ՅՈՒՍ – Ուլորած շիվ:
- ՅՈՒՎՈՒՅ – Ջրամբար:
- ՅՈՒՎՈՒՐ – 1.Մի քիչ ժամանակ, մի պահ: 2.Կրակից առաջացած ջերմություն:
- ՅՈՐ – Ինչու:

Հարունակելի
Գուրգեն ԲԱԴՂԱՍԱՐՅԱՆ

Շնորհավորանք
ՏԱՐԻՆԵՐ ԵՎ ՎԱՍՏԱԿ



Լրացավ վաստակաշատ մանկավարժ Ջինավոր Գրիգորյանի ծննդյան 80-ամյակը: Չավակների, բարեկամների, ընկերների աշխույժ ու հարազատ միջավայրում կյանքի փորձով իմաստնացած մանկավարժը և մեծ ընտանիքի նահապետը անուն տվեց իր երկրային կյանքի անխոնջ աշխատանքին ու տարիների անդուլ տքմանքին:

Որպես հայրենիքի նվիրյալ զինվոր՝ իմաստուն այրը իր կյանքի 55 տարիներն անմնացորդ նվիրաբերել է մատաղ սերնդի դաստիարակությանը, նրա ողջ կյանքն անցել է մաքառումների, պայքարի ու հայտնագործությունների մեջ: Մանկավարժությունը նրա հետ է եղել միշտ և ամենուր՝ տանը, դպրոցում, սեղանի շուրջ, փողոցում: Նա միշտ ուսուցիչ է իր խորհուրդներով, կյանքի փորձով, անցածը վերագնահատելու և ապագան ճիշտ տեսնելու լուսավոր մտքերով:

Ջինավոր Գրիգորյանը մարդ է, ում հոգին չի ծերանում, և պատրաստ է նորից երիտասարդի երկյուղածությամբ մտնել դասարան ու տալ իր հայրենասիրության դասերը՝ նորից սովորելով իր սաների ազնիվ ապրումներով, նրանց երազների անբիծ երկինքներով՝ աստղերի փայլ, դարունների եռք, արևի ազնիվ ու պայծառ շողեր ունենալով իր սրտում...

Ջ. Գրիգորյանը տարիներ շարունակ Նորագյուղի միջնակարգ դպրոցում աշխատել է որպես զինվոր, ծով համբերությամբ աշակերտների մեջ սերմանել լույսի, բարության, լավի, վեհի հունդեր՝ միշտ հավատալով Աստծո արարչագործ ուժին, սիրուն և այդ մեծ սիրուց բաժին հանել իր սաներին, իրեն շրջապատող մարդկանց: Նա հավատացել է մարդու իրական ուժին ու կոչվածությանը, երբ ասում է. «Ամենաթույլ սովորողն էլ կյանքում կոչված է իր գործն անելու: Բոլորը հո գիտնական, բժիշկ, ուսուցիչ չեն՝ դառնալու: Ուսուցիչը պետք է կարողանա նայել իր սաների հոգու խորքը, հասկանալ, օգնել նրանց՝ գտնելու ինքն իրեն: Եվ եթե նա ամենաթույլն էլ կարողանում է տեսնել ճշմարիտ մարդուն, ուրեմն իր գործն անթերի է կատարում»:

Մարդու իրական հարստությունը նրա զավակներն են, իսկ ընտանիքը սրբություն է, և չի կարելի հանդուրժել ոչ մի ոտնձգություն, սիրուն է կրկնել ընկեր Գրիգորյանը: Նա ընտանիքի նահապետ է, արժանավոր 5 զավակների հայր, ավագ ընկեր ու խորհրդատու: Նա քաջ գիտի, որ կյանքի դժվարություններն ու խոչընդոտները ոչ թե արգելքներ են գուտ, այլ առաջ գնալու, հասունանալու, աճելու, կյանքը նոր տեսանկյունով ըմբռնելու գերակա միջոց: Նրա զավակները, սովորելով հոր տված սրբազան խորհուրդներով, հասկանում են, որ կյանքի իրական իմաստը մերձավորի հանդեպ տածած մեծագույն սերն է, փոխըմբռնումը, փոխադարձ հարգանքը, դժվարության պահին իրար սատարելը:

Ծննդյան օրը վերածվել էր ընտանեկան մեծ տոնի, դարձել ծնողին մեծարելու սրբազան պահ...

Նայում են ու մտածում, որ կյանքում ամեն լավ բան ծնվում է ծնողասիրությունից:

Արվեստասեր ընտանիքը կարողանում է ուրախանալ, իր ուրախությունը ներարկել մյուսներին՝ վարակելով վեհ զգացողությամբ. նվագ, երգ ու պար, արտասանություն, սրտի խոսք, սրբազան խոստովանություն: Ահա այդ ընտանիքի իրական դեմքը, ընտանիքի անդամների մարդեղության գլխավոր կոչումը, աշխարհընկալման առանցքը:

Ընկեր Գրիգորյանն իր կյանքի ընթացքում ապահովել է սեփական ընտանիքի բնականոն ընթացքը, որը հեշտ թվացող, բայց դժվար ու պատասխանատու գործ է:

Կնոջ՝ Ջարիկ մայրիկի հետ միասին ձեռք ձեռքի տված, սնել են զավակներին՝ լավ մարդ դաստիարակելու հույսով: Ընկեր Գրիգորյանը անթերի է կատարել իր ծնողական պարտքը ևս:

Ջինավոր Գրիգորյանը բացառիկ անհատականություն է, մեծ վաստակի տեր անձնավորություն, հարգված մարդ ու քաղաքացի, ունի շատ բան ունեն սովորելու հասարակությունն ու երիտասարդությունը:

Նորագյուղի Վ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվը, նրա նախկին սաներն ու գործընկերները սրտանց շնորհավորում են Ջինավոր Գրիգորյանին՝ ծննդյան օրվա առթիվ՝ մարտելով երջանկություն, առողջություն, հաջողություններ, ամենայն բարիք:

Նորագյուղի միջնակարգ դպրոցի
մանկավարժական կոլեկտիվ

ԿԱՐԳ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2012 թվականի մայիսի «31»-ի
Պետական գրանցման համարը 1051281
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ն. Նարինյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 30 » մայիսի 2012թ.

N 99-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐԴԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ս

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը՝ սահմանված կարգով սույն հրամանը ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Ասրյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Կ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2012 թվականի մայիսի 30-ի
N 99-Ն հրամանի

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԴԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻԶԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՈՒՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) (այսուհետ՝ արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) միջին մասնագիտական կրթական ծրագրերով ընդունելության կարգը:
2. Հաստատությունում առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական կրթություն ունեցող, իսկ հեռակա ուսուցմամբ ընդունելություն՝ առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումներով:
3. Հաստատությունում ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ կարգի 24-րդ կետով սահմանված՝ մրցութային հիմունքով, բացառությամբ՝ արվեստի ոլորտի (այսուհետ՝ Ոլորտային) միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների:
4. Օտարերկրացիներն՝ իրենց ընտրությամբ, Հաստատություն կարող են ընդունվել կարգով՝ միայն վճարովի համակարգ կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Հաստատությունն ընդունելությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված՝
 - 1) արհեստագործական և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա (ստացիոնար) ուսուցմամբ անվճար և վճարովի տեղերին համապատասխան.

- 2) միջին մասնագիտական կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ վճարովի տեղերին համապատասխան:
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա ուսուցման տեղերը հատկացվելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում տնօրենը (ռեկտորը) հրապարակում է ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարություն, որը ներառում է դիմորդի փաստաթղթերի ընդունման և մրցույթի անցկացման ժամկետները, ինչպես նաև յուրաքանչյուր մասնագիտության՝
 - 1) կրթության ձևը՝ առկա (ստացիոնար) կամ հեռակա.
 - 2) կրթության հիմքը՝ առնվազն հիմնական կամ միջնակարգ.
 - 3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար և վճարովի տեղերի քանակը.
 - 4) քննության օր(եր)ը, ժամը, վայրը և տեսակը (գրավոր կամ բանավոր).
 - 5) ուսման վճարի չափը.
 - 6) ուսման տևողությունը.
 - 7) որակավորումը.
 - 8) և այլ տեղեկատվություն:
7. Առկա (ստացիոնար) ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի փաստաթղթերն ընդունվում են ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 25-ը (Ոլորտային մասնագիտություններով՝ Հաստատության սահմանած ընդունելության քննության օրվանից 2 օր առաջ, բայց ոչ ուշ, քան օգոստոսի 23-ը), իսկ հեռակա ուսուցման համար՝ մինչև նոյեմբերի 25-ը:
8. Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվում է օգոստոսի 26-27-ը: Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են Հաստատության

- տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:
3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ
 9. Ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով Հաստատությունում տնօրենի (ռեկտորի) հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ:
 10. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը՝ Հաստատության տնօրենը (ռեկտորը), նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարը և անդամները:
 11. Քննությունների անցկացման նպատակով ստեղծվում են քննական հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել Հաստատության, ինչպես նաև հրավիրված մասնագետներ: Քննական հանձնաժողովների նախագահներին հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմինը)՝ ընդունող հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, իսկ կազմերը հաստատում է Հաստատության տնօրենը (ռեկտորը):
 12. Ընդունող հանձնաժողովը սույն կարգին և Հաստատության տնօրենի (ռեկտորի) հաստատած աշխատանքային պլանին համապատասխան ապահովում է՝
 - 1) առկա (ստացիոնար) և/կամ հեռակա ուսուցման ընդունելության կազմակերպումն ու անցկացումը.
 - 2) դիմորդների ընդունելության փաստաթղթերի ընդունումը և ձևակերպումը, մատյանում դիմորդների գրանցումը, փաստաթղթերի ընդունման մասին ստացականի լրացումը և հանձնումը.
 - 3) մասնագիտական կողմնորոշման նպատակով դիմորդների համար անհրաժեշտ

- խորհրդատվության տրամադրումը.
- 4) կարգի 22-րդ կետով նախատեսված արտոնություններ ունեցող դիմորդներից անհրաժեշտ փաստաթղթերի պահանջումը և համապատասխան ձևակերպումը.
- 5) ընդունելության մրցույթի վերաբերյալ տեղեկատվության և քննական առարկաներից խորհրդատվության տրամադրումը.
- 6) Ոլորտային մասնագիտություններով դիմորդների ընդունելության ձևակերպումը՝ քննությունների ժամկետի (ամսաթիվ, ժամ) նշումով և քննական թերթիկների հանձնումը դիմորդներին.
- 7) ընդունելության մրցույթի անցկացումը և Հաստատություն ընդունված դիմորդներին հրամանագրելու մասին որոշման ընդունումը.
- 8) ընդունելության համար Հաստատության շենքի նախապատրաստումը, տարածքների հատկացումը և կահավորումը, ինչպես նաև ընդունելության ընթացքում հերթապահությունը և տարածքի պահպանումը.
- 9) ընդունելությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերումը, ձևակերպումը.
- 10) դիմորդին և (կամ) նրա օրինական ներկայացուցչին Հաստատության լիցենզիային և կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին, կնքվելիք պայմանագրին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում) և կրթության գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին ծանոթացումը:
13. Ընդունելության նախապատրաստման և կազմակերպմանն առնչվող հարցեր քննարկելու համար ընդունող հանձնաժողովը պարբերաբար անց է կացնում նիստեր, որոնք արձանագրում է հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը, իսկ արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և պատասխանատու քար-



ԿԱՐԳ

7 տուղարը:

14. Ընդունող հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում ու ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները և վերահսկում է ընդունելության գործընթացը:

2) հրապարակում է ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարությունը:

3) ձևավորում և հաստատում է քննական հանձնաժողովների կազմերն, ինչպես նաև կազմակերպում և վերահսկում է այդ հանձնաժողովների աշխատանքները:

4) հաստատում է Ոլորտային մասնագիտություններով ընդունելության քննությունների անցկացման ժամանակացույցը:

5) ընդունող և քննական հանձնաժողովների անդամներին ծանոթացնում է ընդունելության գործընթացը կարգավորող նորմատիվ փաստաթղթերին, ինչպես նաև ապահովում է նրանց աշխատանքային պայմանները:

6) որոշում է ընդունում Ոլորտային մասնագիտություններով դիմորդին ընդունելության քննություններին մասնակցելու թույլտվության վերաբերյալ, որի մասին նշում է կատարում նրա դիմումի վրա:

7) միջոցներ է ձեռնարկում ընդունելության ժամանակահատվածում հասարակական կարգի պահպանության, բժշկական սպասարկման ապահովման ուղղությամբ:

8) պատասխանատու է Հաստատությունում ընդունելության գործընթացի պատշաճ նախապատրաստման, կազմակերպման և անցկացման համար:

15. Ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) կատարում է ընդունող հանձնաժողովի նախագահի պարտականությունները՝ նրա բացակայության ընթացքում:

2) ձևավորում է «Դիմորդի անկյուն» մասնագիտական կողմնորոշման, ընդունելության կարգի ու պայմանների վերաբերյալ:

3) հսկում է քննական հանձնաժողովների կողմից մշակված քննական նյութերի ճիշտ և ժամանակին ձևակերպումն ու բազմացումն, ապահովում է քննությունների անցկացման համար անհրաժեշտ տարածքներ:

4) կազմակերպում և հսկում է սպասարկող անձնակազմի աշխատանքները:

16. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) ապահովում է ընդունելության հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի լրացումն ու հաշվառումն ըստ սահմանված կարգի

2) Ոլորտային մասնագիտություններով կազմում է դիմորդների խմբերն ըստ քննական առարկաների և լրացնում քննական տեղեկագրերը:

3) հսկում է դիմորդների փաստաթղթերի ճիշտ ձևակերպման, գրանցման մատյանի և հաշվառման այլ փաստաթղթերի վարման ընթացքը:

4) նախապատրաստում է ընդունող հանձնաժողովի նիստերի նյութերը, ընդունելության հետ կապված հարցերի վերաբերյալ տնօրենի հրամանների նախագծերը, գրառում է ընդունող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

5) պատասխանատու է ընդունելության անցկացման ընթացքի վերաբերյալ պահպանման համար:

17. Քննական հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է քննական տոմսերի և քննական այլ նյութերի մշակումը:

2) ընդունող հանձնաժողովի նախագահի հետ միասին ստորագրում և ծրարում է քննական տոմսերը և պատասխանատու է Հաստատությունում դրանց պահպանման համար:

3) ղեկավարում է քննության ընթացքը և պատասխանատու է քննության անցկացման և հանձնաժողովի աշխատանքի որակի համար:

4) պատասխանատու է քննական տոմսերի մեջ հայտնաբերված վրիպակները տեղում ուղղելու համար:

5) դիմորդներին բացատրում է քննության

ընթացակարգը և ներկայացվող պահանջները:

6) ընտրողաբար ստուգում կամ վերստուգում է գրավոր աշխատանքները:

7) յուրաքանչյուր քննության ավարտից անմիջապես հետո ընդունող հանձնաժողովին է ներկայացնում քննությունների ամփոփ արդյունքները:

18. Ընդունող հանձնաժողովի լիազորությունները դադարում են ընդունելության մրցույթի վերջնական արդյունքների ամփոփման, իսկ քննական հանձնաժողովների լիազորությունները՝ համապատասխան քննությունների վերջնական արդյունքների ամփոփման օրվան հաջորդող 3-րդ օրվանից:

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՐԴ

19. Դիմորդը՝ Հաստատության ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի) հետ ներկայացնում է՝

1) դիմում:

2) 4 լուսանկար (3x4 չափսի):

3) կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ պատճենը:

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, կամ ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան դիմորդի համար, կամ զինվորական գրքույկ, կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության անդամներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ):

5) կցագրման վկայական (զորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զին-հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չզորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում):

6) կարգի 22-րդ կետով սահմանված՝ ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում), որը Հաստատության տնօրենը (ռեկտորը) ուսանողներին հրամանագրելուց հետո՝ 2-օրյա ժամկետում ներկայացնում է Լիազորված մարմնին:

7) իր ընտրած մասնագիտության համար պահանջվածից ավելի բարձր կրթության ավարտական փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում), ինչպես նաև այդ մասնագիտությանը համապատասխան՝ վարպետային ուսուցման որակավորման կամ կարճաժամկետ դասընթացի վկայականի պատճենը (առկայության դեպքում):

8) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաների, փառատուների) դիպլոմները (առկայության դեպքում):

9) պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար տվյալ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա հանձնած ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ փաստաթուղթը (առկայության դեպքում):

10) տեղեկանք աշխատանքի վայրից (առկայության դեպքում):

20. Դիմորդը Հաստատություն ընդունվելու համար կարող է դիմել մինչև 2 մասնագիտության հայտագրմամբ՝ մրցույթի առաջին հայտի գերակայության սկզբունքով, անվճար և վճարովի ուսուցման հիմունքով:

21. Դիմորդը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության գործընթացի կազմակերպման և անցկացման համար, տվյալ Հաստատությունում նախապես վճարում է 1000 (հազար) ՀՀ դրամ: Անկախ մրցույթին մասնակցելուց և ընդունելության արդյունքից՝ վճարված գումարը դիմորդին հետ չի վերադարձվում: Սահմանված վճարներից ազատվում են կարգի 22-րդ կետով նախատեսված արտոնություններ ունեցող դիմորդները, ինչպես նաև Հաստատության ընդունող հանձնաժողովի հայեցողությամբ՝ սոցիալա-

կան աջակցության կարիք ունեցող այլ դիմորդներ:

22. Ընդունելության մրցույթից դուրս, պահուստային տեղերի հաշվին ընդունվում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության անդամներ Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունների և Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության ծառայությունների կողմից տված տեղեկանքների:

1) Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

ա. 1-ին ու 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք՝ համաձայն բժշկատիպիկական փորձաքննության կենտրոնի կողմից տրված եզրակացության:

բ. առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

2) Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զուրկվում են տուցումից:

ա. անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս (առանձին մրցույթով)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի:

բ. անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդները վճարովի ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով:

գ. եթե հայտագրել են միայն վճարովի ուսուցման տեղեր հատկացված մասնագիտություններ՝ ընդունվում են մրցույթից դուրս:

5. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ

23. Ընդունելության մրցույթն անց է կացվում ըստ մասնագիտությունների՝ տվյալ Հաստատությունում:

24. Ընդունելության մրցույթն անցկացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված անվճար և վճարովի ուսուցման տեղերում՝ հետևյալ սկզբունքով:

1) անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար տեղի կարգի ցանկով ընդունելության մրցույթային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը:

2) Ոլորտային մասնագիտություններով անվճար տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և կարգի ցանկերով կցվում է տվյալ մասնագիտության քննության/քննությունների գնահատականների/ու տվյալ մասնագիտության համար ընդունելության մրցույթային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը:

3) մրցույթային հավասար միավորներ ունենալու դեպքում ըստ սահմանված հերթականության առավելությունը տրվում է՝

ա. մեղակալի-դիմորդին:

բ. տվյալ մասնագիտությամբ առավել երկարատև մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող դիմորդին:

գ. պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար քննություններից առավել բարձր գնահատականներ ունեցող դիմորդին:

դ. տվյալ մասնագիտության գծով բարձրագույն կամ մասնագիտական կրթություն ստացած դիմորդին:

ե. դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդին:

զ. հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների առավելագույն միջին թվաբանական ունեցող դիմորդին:

է. ըստ տվյալ մասնագիտության համար կարգի ընդունելության մրցույթային առարկաների ցանկով սահմանված առաջնային համարվող առարկաներից առավել բարձր գնահատականների/միավորների ունեցած դիմորդին:

4) վճարովի ուսուցման տեղերը համալրվում են անվճար ուսուցման տեղերը համալրվելուց հետո՝ կարգի 24-րդ կետի 1-ից 3-րդ ենթակետերով նախատեսված կարգով:

5) մրցույթը համարվում է ավարտված, Լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար Հաստատությանն հատկացված տեղերը համալրվելու կամ դիմորդների թիվն այդ տեղերից պակաս լինելու դեպքում:

25. Թափուր տեղերի առկայության դեպքում մրցույթային հիմունքով Հաստատություն կարող է ընդունվել ընթացիկ տարում այլ Հաստատություն մրցույթով չանցած այն դիմորդը, ով մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 30-ը ներառյալ կենդանի կարգի 19-րդ կետով պահանջված փաստաթղթերը:

26. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար տվյալ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա հանձնած որևէ առարկայի ընդունելության քննության դրական գնահատականը, որը ներկայացվում է սահմանված ձևի տեղեկանքով, դիմորդի ցանկությամբ համարվում է Հաստատությունում տվյալ առարկայի ընդունելության մրցույթային գնահատական:

27. Ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկայից գնահատական չունեցող դիմորդի համար «Հայոց լեզու» առարկան նրա ցանկությամբ փոխարինվում է որևէ «Օտար լեզու» առարկայով:

28. Ոլորտային մասնագիտություններով ընդունելության քննություններն անցկացնում են քննական հանձնաժողովները՝ Հաստատության տնօրենի (ռեկտորի) հաստատած ժամանակացույցի համաձայն: Ժամանակացույցը քննությունների սկզբից առնվազն մեկ շաբաթ առաջ փակվում է Հաստատությունում՝ ի տես բոլորի, իսկ ժամանակացույցի պատճենը՝ հաստատումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան քննությունները սկսելուց մեկ շաբաթ առաջ, ներկայացվում է Լիազորված մարմնին:

29. Քննական տոմսերը կազմվում են Հաստատության քննական հանձնաժողովների կողմից՝ ընդունելության քննություններից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

30. Գրավոր առարկաների քննական տեքստերի քանակը պետք է լինի խմբերի թվից առնվազն 3-ով ավելի: Գրավոր քննությունների հարցատոմսերը պետք է կազմված լինեն այն հաշվարկով, որ յուրաքանչյուր քննական խմբի համար գործածության մեջ դրվի հարցատոմսի 4 տարբերակ պարունակող, նախապես կոմպլեկտավորված մեկ փաթեթ,

ԿԱՐԳ

իսկ վերջինիս ընտրությունը կատարվի առնվազն 3 փաթեթից:

31. Դիմորդն ընդունելության քննության է ներկայանում անձնագրով (մինչև 16 տարեկան դիմորդը՝ ծննդյան վկայականով, եթե անձնագիր չունի), կամ գինվորական գրքուկով, կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության բաժնիների կողմից տրված համապատասխան ձևով և քննական թերթիկով, որոնք ստուգվում են ընդունող հանձնաժողովի կողմից՝ Հաստատություն և քննասենյակ մտնելիս: Քննությունների ժամանակացույցով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին չի թույլատրվում մասնակցել հետագա քննություններին: Հարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին, ընդունող հանձնաժողովի որոշմամբ, հնարավորություն է տրվում այն հանձնել, եթե տվյալ առարկայի քննությունները Հաստատությունում չեն ավարտվել:

32. Յուրաքանչյուր քննական խմբում, որպես կանոն, ընդգրկվում է մինչև 30 դիմորդ: Բանավոր քննության դեպքում քննասենյակում միաժամանակ կարող է գտնվել ոչ ավելի, քան 5 դիմորդ:

33. Ընդունելության քննությունների օրերին Հաստատությունում և քննական սենյակում գտնվելու իրավունք ունեն.

1) Հաստատությունում՝ ընդունող հանձնաժողովի անդամները, տվյալ օրվա քննություններին մասնակցող դիմորդներն ու քննական հանձնաժողովի անդամները, սպասարկող տեխնիկական անձնակազմի անդամները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև Լիազորված մարմնի ներկայացուցիչները: Գրավոր քննության ընթացքին հետևելու նպատակով ընդունող հանձնաժողովի նախագահը կարող է հրավիրել դիմորդների ծնողներ, հասարակայնության ներկայացուցիչներ և լրագրողներ:

2) Քննական սենյակում՝ քննական հանձնաժողովի անդամները, տվյալ օրվա քննություններին մասնակցող դիմորդները, Ընդունող հանձնաժողովի նախագահը և տեղակալը, ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը և սպասարկող տեխնիկական անձնակազմի անդամները միայն ընդունող հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև Լիազորված մարմնի ներկայացուցիչները:

34. Արվեստի ոլորտի մասնագիտությունների քննությունների համար նախատեսվում է

հետևյալ տևողությունը.
1) «Սոլֆեջիո» առարկայի գրավոր թելադրության համար՝ 25 րոպե, իսկ բանավոր քննությանը՝ յուրաքանչյուր դիմորդի նախապատրաստվելու և պատասխանելու համար մինչև 15-ական րոպե.

2) գեղարվեստի մասնագիտություններով՝ ա. գծանկար՝ մինչև 540 րոպե (3 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).
բ. գունանկար՝ մինչև 360 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).

գ. կոմպոզիցիա՝ մինչև 450 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 5 ակադեմիական ժամ).
դ. քանդակ՝ մինչև 360 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).

ե. քանդակի կոմպոզիցիա՝ մինչև 225 րոպե (1 օր՝ 5 ակադեմիական ժամ):

35. Ոլորտային մասնագիտություններով գրավոր քննական աշխատանքները (ներառյալ սևագրությունը) և բանավոր քննությունների ժամանակ դիմորդների նշումները կատարվում են Հաստատության դրոշմակրկնված թերթիկների վրա: Վերջիններս ենթակա են հաշվառման և մինչև քննական հանձնաժողովին հանձնելը պահվում են ընդունող հանձնաժողովի նախագահի մոտ:

36. Գրավոր քննական աշխատանքները, բանավոր քննությունների ժամանակ դիմորդներին տրված դրոշմակրկնված թերթիկները, լրացված քննական տեղեկագրերը՝ քննական հանձնաժողովի նախագահը քննության ավարտից (գրավոր քննության դեպքում՝ աշխատանքների ստուգումից) անմիջապես հետո հանձնում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Յուրաքանչյուր քննության արդյունքները հաստատվում են ընդունող հանձնաժողովի նախագահի կողմից:

37. Գրավոր աշխատանքների ստուգումը կատարվում է Հաստատությունում, քննական հանձնաժողովի անդամների կողմից:

38. Ոլորտային մասնագիտություններով բանավոր քննությունների համար նախատեսվում է հետևյալ տևողությունը՝ յուրաքանչյուր դիմորդի նախապատրաստվելու համար մինչև 30 րոպե, իսկ պատասխանի համար մինչև 15 րոպե:

39. Ընդունելության քննությունները Ոլորտային մասնագիտություններով գնահատվում են 20 բալային համակարգով: Դրական են համարվում 8 և ավելի միավորները: 8 միավորից ցածր ստացած դիմորդը չի մասնակցում մրցույթին:

40. Քննությունների ժամանակացույցով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին չի թույլատրվում մասնակցել հետագա քննություններին: Հարգելի պատճառով քննությանը

չներկայացած դիմորդին, ընդունող հանձնաժողովի որոշմամբ, հնարավորություն է տրվում այն հանձնել, եթե տվյալ առարկայի քննությունները Հաստատությունում չեն ավարտվել:

41. Հաստատության ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված քննությունների արդյունքների ցուցակները փակցվում են ի տես բոլորի ոչ ուշ, քան տվյալ քննության հաջորդ օրվա ժամը 12-ը:

42. Գրավոր քննության գնահատականը դիմորդը կարող է գրավոր բողոքարկել ընդունող հանձնաժողովի նախագահին՝ քննությունների արդյունքները հրապարակվելուց հետո՝ մինչև հաջորդ օրվա ժամը 12-ը: Դիմումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում քննական հանձնաժողովը՝

1) դիմորդի ներկայությամբ վերստուգում, քննարկում է բողոքարկված աշխատանքը.

2) պատճառաբանված մերժում է փոփոխել կամ փոփոխում է գնահատականը՝ այդ մասին տեղյակ պահելով դիմորդին:

43. Գնահատականը փոփոխելու դեպքում այն վավերացվում է քննական հանձնաժողովի նախագահի կողմից, որի համար քննական տեղեկագրում հանձնաժողովի նախագահը տվյալ դիմորդի հերթական համարը վերցնում է շրջանակի մեջ, դրա դիմաց կատարում է «Գնահատականը փոփոխված է» նշումը և ստորագրում: Փոփոխված գնահատականն անց է կացվում նոր տեղեկագրի մեջ: Համապատասխան փոփոխություն է կատարվում նաև դիմորդի քննական թերթիկում: Գնահատականների փոփոխությունը արձանագրվում է ընդունող հանձնաժողովի կողմից:

44. Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկել առանց քննասենյակից դուրս գալու՝ քննական հանձնաժողովի նախագահի ներկայությամբ: Բողոքի քննարկման արդյունքում Հանձնաժողովի նախագահը կարող է վերանայել բանավոր քննության գնահատականը:

45. Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո և 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունելության արդյունքները ներկայացվում է Լիազորված մարմնին:

6. ՈՒՍԱՆՈՂԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

46. Մրցույթով անցած յուրաքանչյուր դիմորդի համար կազմվում է անձնական գործ, որտեղ ընդգրկվում են կարգի 19-րդ կետի 1-2 և 3-10 ենթակետերով նախատեսված փաստաթղթերը կամ փաստաթղթերի պատճենները, հիմնական կրթության վկայականի կամ միջնակարգ կրթության ատեստատի բնագիրը

կամ նոտարական հաստատումով (վավերացված) պատճենը, իսկ առկայության դեպքում՝ նաև գրավոր քննական աշխատանքները, բողոքարկման դիմումները և դրանց վերաբերյալ որոշումները:

47. Ընդունող հանձնաժողովի համապատասխան որոշման և լրիվ ձևակերպված անձնական գործի հիման վրա Հաստատության տնօրենը մրցույթով անցած դիմորդներին 2 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է որպես ուսանող: Հրամանագրվածների ցուցակները հրապարակվում են ոչ ուշ, քան հրամանագրման հաջորդ օրը:

48. Թափուր տեղերի առկայության դեպքում մրցութային հիմունքով Հաստատություն կարող է ընդունվել ընթացիկ տարում այլ մասնագիտական ուսումնական հաստատություն մրցույթով չանցած այն դիմորդը, ով մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 31-ը ներառյալ կներկայացնի կարգի 19-րդ կետով պահանջված փաստաթղթերը:

49. Հաստատության տնօրենը (ռեկտորը) հրամանագրված դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որտեղ պարտադիր ամրագրվում են ուսանողի ընտրած մասնագիտությունը, ուսուցման ձևը, սովորելու տարիների տևողությունը և Հաստատությունում ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների: Պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաժանված չափերը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

50. Ուսանողին հանձնվում է պայմանագրի երկրորդ օրինակը, ուսանողական տոմս և առաջադիմության գրքուկ:

51. Հաստատության ուսումնական խմբում ուսանողների թիվը սահմանվում է՝ առկա (ստացիոնար) ուսուցման համար մինչև 25, հեռակա ուսուցման համար՝ մինչև 20 մարդ:

52. Հաստատություն չընդունված դիմորդին վերադարձվում են կարգի 19-րդ կետով պահանջված փաստաթղթերը, իսկ դրանց պատճենները, ինչպես նաև քննական աշխատանքները պահպանվում են Հաստատությունում 6 ամիս, որից հետո ոչնչացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

53. Ընդունելության հետ առնչվող կամ մրցույթի անցկացման ընթացքում ծագած հարցերը, որոնք չեն կանոնակարգվում կարգով, կարգավորվում են ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

54. Կարգի իրականացումը վերահսկվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

ՁԱՆԿ

1. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱՎԱՆԱՅՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԱՈՒՐԿԱՆԵՐԻ

1) ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (առկա ուսուցում)

Օճակ-Կարգի	Մասնագիտությունը	Մրցութային առարկաները		
0515	Ջաբոթավորատական պրոլետտ (իմունական և միջնակարգ կրթությամբ)	Երկ.	Մ	ՀԳ
0605	Փաստաթղթալեզուություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում (միջնակարգ կրթությամբ)	ՀԳ	Օ1	ԻԳ
0608	Սովորական գործ (ըստ շքողելի) (միջնակարգ կրթությամբ)	Մ	ՀԳ	Օ1
1002	Էլեկտրատաղանթագրությունների տեխնիկական շահագործում (միջնակարգ կրթությամբ)	Յ	Մ	ՀԳ
1207	Էռակցման աշխատանքների տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ)	Յ	Մ	ՀԳ
2203	Համակարգիչների շահագործում (միջնակարգ կրթությամբ)	Մ	Յ	ՀԳ
2204	Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում (միջնակարգ կրթությամբ)	Մ	Յ	ՀԳ
2302	Հրդրանոցային տնտեսություն (միջնակարգ կրթությամբ)	ՀԳ	Օ1	Կ
2304	Վարակիրական պրոլետտ և զարգացող դիմապատկեր (իմունական և միջնակարգ կրթությամբ)	Երկ.	Կ	ՀԳ
2311	Հասարակական տնտես (իմունական և միջնակարգ կրթությամբ)	Կ	Բ	ՀԳ

2401	Ջրաուղղարկող միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (իմունական և միջնակարգ կրթությամբ)	Մ	Յ	ՀԳ
2604	Սևուսառյակ տնտեսություն (միջնակարգ կրթությամբ)	Կ	Բ	ՀԳ
2809	Կապի պրոտապրոթեան տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ)	Մ	Բ	ՀԳ
2901	Վերանորոգման տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործում (միջնակարգ կրթությամբ)	Մ	Յ	ՀԳ
2902	Հիմնարարական ժողովրդական և վերանորոգման աշխատանքների իրականացում (դրձակի) (իմունական և միջնակարգ կրթությամբ)	Երկ.	Մ	ՀԳ
2905	Համարակրթական շինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական սպասարկում (ըստ թղթալեզու, էքսպլատատրակար, տրանսպորտային) (իմունական և միջնակարգ կրթությամբ)	Մ	Յ	ՀԳ
2906	Տանկաբարձարական աշխատանքների իրականացում (միջնակարգ կրթությամբ)	Երկ.	Մ	ՀԳ
2907	Սևուսառյակ տնտեսություն, ժանրապատկերային տնտեսություն (միջնակարգ կրթությամբ)	Երկ.	Մ	ՀԳ
2908	Հարգարձան շինարարական աշխատանքների իրականացում (էքսպլատատր, սովորական, ժելատին, ներկարար) (իմունական կրթությամբ)	Երկ.	Մ	ՀԳ

ՑԱՆԿ

9

Շանկայիդ	Մասնագիտությունը	Մրցութային առարկաները
1207	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (իմնական կրթությամբ)	Ֆ Մ Հգ
2203	Համակարգիչների շահագործում (իմնական կրթությամբ)	Մ Ֆ Հգ
2311	Հասարակական սնունդ (իմնական կրթությամբ)	Կ Բ Հգ
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և ներդրում (իմնական կրթությամբ)	Մ Ֆ Հգ
2905	Ճանապարհաշինարարական և բարձրարժեքի աշխատանքների տեխնիկական ապահովում (բուլդոզերակալ, էքսկավատորակալ, տրակտորիստ) (իմնական կրթությամբ)	Մ Ֆ Հգ

2) ՄԱՐՏՈՒՌՈՒ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍԻՆԱՐԱՆ (առկա ուսուցում)

Օ գ տ ա գ ո թ վ ա ծ հ ա պ ա վ ու մ ն ե թ

Յլգ- Յայոց լեզու և գրականություն

Բ - Բիմիա

Օլ - Օտար լեզու

Կ - Կենսաբանություն

Մ - Մաթեմատիկա

Աշխ - Աշխարհագրություն

Ֆ - Ֆիզիկա

Երկ - Երկրաչափություն

2. ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՌԻՍԻՆԱԿԱՆ ՀԱՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՊԻՆԵԼՈՒԹՅԱՆ

Շանկայիդ	Մասնագիտությունը	Մրցութային առարկաները	Քննական առարկաները
0402	Մանկապարտեզային զբոս (իմնական և միջնակարգ կրթությամբ)	Կ Բ Հգ	
0405	Պեղատնային (միջնակարգ կրթությամբ)	Կ Բ Հգ	
0406	Բույրական զբոս (իմնական և միջնակարգ կրթությամբ)	Կ Բ Հգ	
0418	Բուժական զբոս ցինկյան ուժերում (իմնական կրթությամբ)	Կ Բ Հգ	

ՔՆՆԱԿԱՆ ԵՎ ՄՐՅՈՒԹՅՈՒՆ ԱՈՐԿԱՆԵՐԻ

Շանկայիդ	Մասնագիտությունը	Մրցութային առարկաները	Քննական առարկաները
0501	Արտիստիկական կրթությունը (արվեստի տեսություն և պատմություն, լեզուաբանություն, լեզուաբանական գաղափարներ, փոխաբերական լեզուաբանական գաղափարներ)	Հգ	Մասն 1 Մրկ 2
0502	Երգչախումբ	Հգ	Մասն 1 Մրկ 2
0503	Երգչախումբ (արտադրություն)	Հգ	Մրկ 2
0504	Երգչախումբ (արտադրություն)	Հգ	Մրկ 2
0505	Լեզուաբանական կրթություն (արվեստի)	Հգ	Մասն 1 Մրկ 2

1) ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Թ. ԸՄԱՍԷԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ (առկա ուսուցում)

Շանկայիդ	Մասնագիտությունը	Մրցութային առարկաները	Քննական առարկաները
0312	Պատմա-հնագիտական առարկաներ (իմնական կրթությամբ)	Հգ Մ Տր	
0507	Պատմա-հնագիտական առարկաներ (իմնական կրթությամբ)	Հգ	Մասն
0515	Մատենագիտություն-հնագիտական առարկաներ և ժամանակակից (իմնական կրթությամբ)	Հգ	ԳՅԳ ԳՅԳ Կրթ
0518	Մանկապարտեզային զբոս (իմնական կրթությամբ) և ժամանակակից (իմնական կրթությամբ)	Հգ	Մասն
2014	Ռեզիդենտական (իմնական կրթությամբ) և Տարածքային (իմնական կրթությամբ)	Ֆ Մ Տր	
2307	Բարձրագույն (իմնական կրթությամբ)	Տր Օլ Տր	

2) ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԾՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ (առկա ուսուցում)

Շանկայիդ	Մասնագիտությունը	Մրցութային առարկաները	Քննական առարկաները
0312	Պատմա-հնագիտական առարկաներ (միջնակարգ կրթությամբ)	Հգ Մ Տր	
0517	Պատմա-հնագիտական զբոս (միջնակարգ կրթությամբ)	Հգ Տր Օլ	
0601	Էկոնոմիկա, Խաչատրյանի և Խաչատրյանի (միջնակարգ կրթությամբ)	Մ Տր Օլ	

3) ԸՈՒՇԻ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՍԱՆԻՍԱՐ ՔՈԼԵՋ (առկա ուսուցում)

Շանկայիդ	Մասնագիտությունը	Մրցութային առարկաները	Քննական առարկաները
0207	Մաթեմատիկական զբոս (իմնական կրթությամբ)	Կ Օլ	Հգ Տր
0302	Տարածքային (իմնական կրթությամբ)	Տր Տր	Մ
0303	Ռեզիդենտական (իմնական կրթությամբ)	Տր Օլ	Հգ Օլ
0307	Տեխնիկական (իմնական կրթությամբ)	Կ Հգ	Տր
0312	Պատմա-հնագիտական առարկաներ (իմնական կրթությամբ)	Հգ Մ Տր	
0313	Մաթեմատիկական կրթություն (իմնական կրթությամբ)	Հգ Մ Տր	
0416	Մաթեմատիկական զբոս (իմնական կրթությամբ)	Հգ Մ	
0501	Էկոնոմիկա, Խաչատրյանի և Խաչատրյանի (իմնական կրթությամբ)	Մ	Հգ Օլ
0502	Մանկապարտեզային (արտադրություն) (իմնական կրթությամբ)	Մ	Հգ Օլ
0503	Տեխնիկական (իմնական կրթությամբ)	Մ	Հգ Օլ
2203	Հնագիտական տեխնիկա և տեխնոլոգիաներ (իմնական կրթությամբ)	Մ	Ֆ Հգ
2307	Բարձրագույն (իմնական կրթությամբ)	Տր	Օլ Հգ

ՑԱՆԿ

4) ՀՈՒՑԻ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՎԱՆ ՀՈՒՍԱՐԱՐ ՔՈՒՅՑ (հեռակա ուսուցում)

Մած-կազի	Մասնագիտության անվանումը	Մրցութային առարկաները	Քննական առարկաները
0601	Էլեկտրիկ, հաշվադասիական հաշվառում և աուդիտ (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Մ	ՆԳ ՕԳ
0602	Մենեջմենթ (կառավարում) (հիմնական կրթությունը)	Մ	ՆԳ ՕԳ
0603	Ֆինանսներ (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Մ	ՆԳ ՕԳ
0609	Պետական և տեղական կառավարում (միջնակարգ կրթությունը)	Մ	ՆԳ ՕԳ
2401	Փոխադրամների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (հիմնական կրթությունը)	Մ	Ֆ ՆԳ
2604	Անտառային և անտառատնտեսության տնտեսություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Կ	Մ ՆԳ
2710	Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա (հիմնական կրթությունը)	Կ	Ք ՆԳ
2819	Մաշտոկական ապրանքների որակի փորձաքննություն (հիմնական կրթությունը)	Մ	Ք ՆԳ
2912	Ջրամատակարարում և ջրահեռացում (հիմնական կրթությունը)	Մ	Ֆ ՆԳ
3102	Գյուղատնտեսագիտություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Ք	Կ ՎԳ
3103	Անասնաբուծություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Ք	Կ ՎԳ
3104	Անասնաբուծություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Ք	Կ ՎԳ
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Մ	Ֆ ՎԳ
3205	Հողերի բարելավում, հողավերականգնում և պահպանություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Մ	Կ ՆԳ

2912	Ջրամատակարարում և ջրահեռացում (հիմնական կրթությունը)	Մ	Ֆ	ՎԳ
3102	Գյուղատնտեսագիտություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Ք	Կ	ՎԳ
3103	Անասնաբուծություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Ք	Կ	ՎԳ
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Մ	Ֆ	ՎԳ
3205	Հողերի բարելավում, հողավերականգնում և պահպանություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Մ	Կ	ՎԳ

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՍՏԱՐԱՆԻ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ Միջին մասնագիտական կրթական ծրագիր (առկա ուսուցում)

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՍՏԱՐԱՆԻ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ Միջին մասնագիտական կրթական ծրագիր (հեռակա ուսուցում)

Օ գ տ ա գ ո Ր ժ Վ ծ հ ա պ ա Վ ու մ ն ե Ր

- ՅԼ - Յայոց լեզու
- Կոմ - Կոմպոզիցիա
- ՅԼԳ - Յայոց լեզու և գրականություն
- Ք - Քիմիա
- ՈԼ - Ուսաց լեզու
- Կ - Կենսաբանություն
- ՕԼ - Օտար լեզու
- Ֆիզ - Ֆիզկուլտուրա
- Մ - Մաթեմատիկա
- ՅՊ - Յայոց պատմություն
- Ֆ - Ֆիզիկա
- Մասն - Մասնագիտական
- ԳՆՆ - Գունանկար
- ԳՑՆ - Գծանկար
- ՍուՖ - Սուֆեջիո
- ԴՅՆ - Դաշնամուր

ԵԳ - Երաժշտական գրագիտություն

1. Մրցութային առարկայի գնահատական/միավոր է համարվում հիմնական կրթության վկայականի որակավորման, միջնակարգ կրթության ատեստատի պետական ավարտական քննություններից ստացած համապատասխան առարկայի միավորը, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդրի քննական գնահատականը:

Եթե առարկան քննական չէ՝ ապա մրցութային առարկայի գնահատական /միավոր է համարվում հիմնական կրթության վկայականի կամ միջնակարգ կրթության ատեստատի համապատասխան առարկայի առաջադիմության միավորը:

2. Հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի քննական միավորների միջին թվաբանական կամ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդրի գնահատականները:

5-միավորային համակարգ	20-միավորային համակարգ
«5»	«20»
«4»	«17»
«3»	«13»

տականների միջին թվաբանականը հաշվարկելիս անհրաժեշտ է անցնել 20-միավորային համակարգի՝ օգտվելով ներքոնշյալ սանդղակներից:

1) Գնահատման 5-միավորային համակարգից 20-միավորային համակարգի անցման համար կիրառվում է հետևյալ սանդղակը.

10-միավորային համակարգ	20-միավորային համակարգ
«10»	«20»
«9»	«18»
«8»	«16»
«7»	«14»
«6»	«12»
«5»	«10»
«4»	«8»

2) Գնահատման 10-միավորային համակարգից 20-միավորային համակարգի անցման համար կիրառվում է հետևյալ սանդղակը.

3. Հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների,

5) ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ԵՄԲԵԿՍՅԱՆ» ՀԱՍՏԱՐԱՆ Միջին մասնագիտական կրթական ծրագիր (առկա ուսուցում)

Մած-կազի	Մասնագիտության անվանումը	Մրցութային առարկաները	Քննական առարկաները
0601	Էլեկտրիկ, հաշվադասիական հաշվառում և աուդիտ (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Մ	ՆԳ ՕԳ
0602	Մենեջմենթ (կառավարում) (հիմնական կրթությունը)	Մ	ՆԳ ՕԳ
0603	Ֆինանսներ (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Մ	ՆԳ ՕԳ
0609	Պետական և տեղական կառավարում (միջնակարգ կրթությունը)	Մ	ՆԳ ՕԳ
2401	Փոխադրամների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (հիմնական կրթությունը)	Մ	Ֆ ՆԳ
2604	Անտառային և անտառատնտեսության տնտեսություն (հիմնական և միջնակարգ կրթությունը)	Կ	Մ ՆԳ
2710	Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա (հիմնական կրթությունը)	Կ	Ք ՆԳ
2819	Մաշտոկական ապրանքների որակի փորձաքննություն (հիմնական կրթությունը)	Մ	Ք ՆԳ

ԽՆԿԱՐԿՈՒՄ

ՆՐԱ ԿՈՉՈՒՄՆ ԷՐ ՈՒՍՈՒՅԻՉ - ԶԻՆՎՈՐ

«Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում նրա պակասի պատճառով»,- Արցախի Հանրապետության լինելության փաստը հաստատում է Նժդեհի այս խոսքերի ճշմարտությունը: Արդարև, Արցախյան ազատամարտում հայրենասիրության պակաս չեղավ: Արցախում բռնցքվեցին հայության հավաքական ոգին ու հաղթելու կամքը, ազգը դարձավ զինվորային, և հայրենիքի չափն ավերական հայրենական պատերազմում Հայկի ընթացող ոգին առաջնորդեց նրանց հանուն Կյանքի ու Ազատության: Չինվոր էին բոլորը՝ այր ու կին, ծեր ու մանուկ, որ ապրում էին այս հողում ու չլքեցին այն ամենատրտալից պահերին անգամ: Հանապազ հոշոտվող հայ-

անցին նրա գիտակցական կյանքը: Իսկ միջուկը ձևավորեց գեներալի հիշողությունը, որը յուրաքանչյուրիս արյամբ է փոխանցվում:

Դպրոցում ամենից շատ սիրում էր մաթեմատիկան ու ֆիզիկան, և պատահական չէր, որ ծննդավայրում 8-րդ դասարանն ավարտելուց հետո մեկնեց Երևան և ուսումը շարունակեց նախ Երևանի ֆիզիկամաթեմատիկական թեքունով դպրոցում, ապա՝ պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատանք են առաջարկում համալսարանում, բայց նա գերադասեց վերադառնալ Արցախ: Աշխատանքի անցավ Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում, միաժամանակ շախմատի մանկապատանեկան դպրոցի փոխտնօրեն ու մարզիչ էր:

Մայիսյան եռատնի օրերին ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը, որի ուսուցիչներից էր Ս. Սաֆարյանը, կազմակերպել էր նրա հիշատակին նվիրված հուշ-երեկո: Հրապարակում էր Ս. Սաֆարյանի այրին՝ Նուսեն և երկու դուստրերը՝ Գեղանուշն ու Սաթենիկը, Աժ պատգամավոր, լրագրող Վ. Բաղդասյանը, Ստեփանակերտի շախմատի դպրոցի նախկին տնօրեն Ե. Մկրտչյանը, պատերազմի ժամանակ նրա անմիջական հրամանատար, հրետանու պետ, Ազգային հերոս, գեներալ-մայոր Գեորգի Գասարյանը (վաղուց կենդանի լեգենդ դարձած «Գրադ ժողան»), դպրոցի շեֆ-գործարար



Մանկական մեղալ, դպրոցի՝ 1989-90 ուստարվա շրջանավարտներ Արթուր Բաբայանին և Դավիթ Հակոբյանին:

Ամեն ինչ արվել էր պահը՝ հուզիչ, օրն անմոռաց դարձնելու համար. դասասենյակի կահավորանքը, Սամվելի մեծադիր նկարը, նրա մասին ֆիլմից հատվածի ցուցադրությունը, ուսուցչուհու խոսքը, երեխաների ասմունքն ու երգ-երաժշտությունն ստեղծեցին շիկացած մթնոլորտ, որտեղ թևածում էր հայրենապաշտության ոգին:

Երվանդ Մկրտչյանը Սամվելին բնութագրեց որպես հրաշալի մարզիչ և ուժեղ շախմատիստի, քաջ ու հմուտ կամավորականի, ով հայրենի Ավդուռի պաշտպանության կազմակերպիչն ու մասնակիցն էր, ում նախաձեռնությամբ հինգ երիտասարդներով շուրջօրյա հերթապահությանը դիրքեր են պահել և որտորական հրացանով ստիպել ավտոմատով զինված թուրքերին փախչել:

Հայրենիքը վտանգի պահին լքողներին նա դավաճան էր համարում և այդ օրերին, առավել քան երբևէ, կարևորում էր իր ներկայությունը գյուղում: Դեռ ավելին՝ նա որոշեց իր հարսանիքն անել գյուղում, որն այն ժամանակ թշնամի կրակի տակ էր պահում: 1990թ. դեկտեմբերի 1-ին Սամվելն ու Նուսեն ամուսնացան. հարսանիքը գյուղում էր՝ ի հեծուկս թշնամու և հանուն վաղվա՝ ընկերների հավատի զորացման: Լրագրող Վ. Բաղդասյանի հավաստմամբ՝ Սամվելի այդ քայլը նշանակում էր. «Թող հակառակորդը տեսնի, որ իրենից չենք վախենում: Թող իմանան, որ կանք, կլինենք ու կշատանանք»: Սակայն հայրական սիրո ծարավը չհասցրեց հագեցնել հայրանալու փափագով. առաջնեկը երկուսուկես տարեկան էր, երբ նա գոհվեց, իսկ Սաթենիկին, ով ֆիզմաթ դպրոցի այս տարվա շրջանավարտ է, այդպես էլ չտեսավ: Անչափ հուզված էր Նուսեն Սաֆարյանը և հագիվ էր կարողանում հարմար բառեր գտնել իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնելու միջոցառման կազմակերպիչներին:

Կրթօջախի տնօրեն Սուսաննա Ներսիսյանը հպարտ է, որ իր ղեկավարած դպրոցի հետ անքակտելիորեն կապված է Ս. Սաֆարյանի անունը: «Ինձ բախտ չի վիճակվել աշխատել նրա հետ, բայց լսելով նրա մասին, ճանաչելով նրան գրքերից ու ֆիլմերից, բառերը տկար են դառնում արտահայտելու համար նրա ասարած կարծատև, բայց զարմանալի կյանքի ուղին: Ուսուցիչ, զինվոր - դա է նրա կոչումը՝ լինել առաջին գծում թե՛ մարտի դաշտում, թե՛ դպրոցում: Փառք ու պատիվ Սամվել ծնող հայ ժողովրդին, նրա մորն ու փոքրիկ գյուղին: Փառք ու պատիվ մեր հերոսներին, հայրենյաց զոհասեղանին իրենց կյանքը դրած մեր խիզախ հայրորդներին»: Նրա առաջարկությամբ ներկայները հոտոնկայս հարգեցին մեր Ազատամարտի նահատակների անմահ հիշատակը: Հավարտ ելույթի տիկին Ներսիսյանը հավաստեց, որ մենք երջանիկ սերունդ ենք, քանզի մեզ էր վերապահված իրականացնելու մեր պապերի դարավոր երազանքը՝ շահել Հայրենիք, ձեռք բերել պետականություն և փոխանցել սերունդներին:

Հրետանավոր Ս. Սաֆարյանը կանգնած

էր հրետանու ստեղծման ակունքներում: Երբ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրետանու պետ Գ. Գասարյանն առաջին հրետանավորներին էր ընտրում, ճշգրիտ հաշվարկներով աչքի ընկավ ուսուցիչ-զինվորը: «Երբ վտանգված հայրենիքիս կանչով եկա և ընտրում էի ապագա հրետանավորներին, առաջինը Սամվելն էր և նրա մեծ շատերը: Իմ հերոսի կոչման համար ես նրանց եմ պարտական: Մի քանի օրում նա տիրապետեց հրետանավորի գործին, որին մինչ այդ անծանոթ էր: Չարմանալի խելքի, զսպվածության, կամքի ու խիզախության տեր երիտասարդն իմ աջ ձեռքն էր, իմ հենարանն ու պատվարը, և ես շատ էի կապվել նրան»: 1992-ին Սամվելը նշանակվեց հրանոթի հրամանատար, մի քանի ամիս անց՝ հրետանային բրիգադի առաջին հրամանատար: Ապա գեներալն անդրադարձավ աճող սերունդին՝ հայրերին արժանի հերթափոխ համարելով նրանց. «Հայի սերունդը բոլոր ժամանակներում էլ հերոս է եղել, վերհիշենք հայոց պատմությունը, Հայրենական մեծ պատերազմը և մեր օրերի փայլուն հաղթանակը, երբ յոթ միլիոնի դեմ կանգնեց 150 հազարը՝ ազատ ապրելու իրավունքի համար պատրաստ մեռնելու»: Ցավոք, լավագույններին ենք կորցրել, հոյակապ տղաների, խոր ափսոսանքով հավելեց Գ. Գասարյանը և իր գոհունակությունը հայտնեց միջոցառման կազմակերպիչներին: Նա առաջարկեց նման հանդիպումներ ավելի հաճախակի կազմակերպել ու լայն լսարանի համար և ոչ միայն դպրոցներում, այլև զորամասերում:

Առաջին անգամ Սամվելը վիրավորվեց 93-ի օգոստոսին. ակամի վրա պայթել էր մեքենան, որի մեջ էր նաև ինքը: Սակայն նրան ոչ ոք չէր կարող հետ պահել, և հագիվ ապաքինվելով՝ ռազմաճակատ է մեկնում հենակներով ու մասնակցում տարբեր մարտերի: Փետրվարի 18-ին Օմարի լեռնանցքը լրիվությամբ վերահսկում էր հայկական զինուժը: Մարտի կեսերին թշնամուն հաջողվում է տիրել մեկ-երկու բարձունք: ԴՔ հրետանային բրիգադի հրամանատար Ս. Սաֆարյանը ակամանետային դիվիզիոնի հրամանատար Սուրեն Անտոնյանի և Սամվել Աբրահամյանի հետ վարորդ Կամո Հայրապետյանի մեքենայով մարտի 18-ին մեկնեց Օմար: Ընկերները փորձեցին հետ պահել նրան, բայց Սամվելն անդրդվել էր և մինչև վերջին բարձունքը բարձրանում էր հեռակով: Առաջադրանք էին ստացել՝ ուսումնասիրել տեղանքը հրետանու հետագա ռազմագործողությունները մշակելու նպատակով: Բայց թշնամին նկատել էր մեքենան և ուղիղ նշանառությամբ խոցեց այն: Չորս հոգուց միայն մեկն է հրաշքով փրկվում՝ Սամվել Աբրահամյանը, ով ներկա էր միջոցառմանը և իր հուշերով ավելի թանկ էր սիրելի դարձրեց ընկերոջ կերպարը: Ամեն տարի մարտի 18-ին այսօր արդեն գնդապետ Ս. Աբրահամյանն այցելում է հուշահամալիր, ծաղիկներ դնում ընկերների շիրիմներին, տոն և հիշատակի օրերին իր հետ տանում է և որդուն, պատմում նրանց մասին... Եվ այսպես իրար են ազուցվում այն շրջափակ օղակները, որ մենք կոչում ենք սերունդների կապ, այսպես ազգի հիշողությունն են կենդանի պահում, հայրենաճանաչ ու ինքնաճանաչ երիտասարդություն դաստիարակում:

...Մարտական ընկերների հուշերը դիմագծի մրբին բացահայտումներ են դառնում, ամբողջացնում օրվա հերոսին, վերհանում նրա մարդկային էությունը, տեսանելիության չափ շոշափելի դարձնում նրա ներկայությունը... Ու թվում է՝ հարյուր-հազար տարի ճանաչել ես նրան, հիացել նրա քաջությամբ ու համեստությամբ, բյուրեղապակու մեծ փխրուն հոգով, բայց որձաքարի պես պինդ հայի իր տեսակով ու ինքնությամբ:

Ես նույնպես ուզում եմ շնորհակալություն հայտնել միջոցառման կազմակերպիչներին, ովքեր այդքան ընձեռնեցին ծանոթանալու Սամվել Սաֆարյան հային, մարդուն, ուսուցչին և հայրենյաց նվիրյալին:

Սեֆյա ՄԻՆՈՅԱՆ



րենիքն ի զեն էր կոչել բանվորին ու հողագործին, ուսուցչին ու գիտնականին, բժշկին ու արվեստագետին, մարզիկին ու ճարտարագետին... Բանաստեղծ, հրապարակագիր Սատուհ Գրիգորյանը վասն հայրենյաց իմացյալ մահով ընկածների մասին այսպիսի փաստեր է բերում՝ 40 գրող, 60 նկարիչ, 110 մարզիչ-չեմպիոն, 2 հոգևորական... Իսկ Արցախից ու Հայաստանից որքան ուսուցիչներ են իրենց կյանքը դրել գոհասեղանին, ցավոք ստույգ թիվ չունենք (ըստ ԿԱԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի ֆիզիկայի մասնագետ, 20-րդ դարի լավագույն մանկավարժ Բ. Դավթյանի ուսումնասիրությունների՝ միայն Արցախից՝ 59-ը): Նրանք մարտադաշտում շարունակեցին հայրենյաց



(թիվ 59138) հրանկազմը՝ հանձնիս գործարարի հրամանատար Գրիգորի Սահակյանի, գնդապետ Սամվել Աբրահամյանի, մայր, դիվիզիոնի հրամանատարի ԴԱԳ տեղակալ Վրեժ Ավանեսյանի:

Միջոցառման կազմակերպիչ և վարող, դպրոցի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նուբար Պողոսյանը նշեց, որ դպրոցի ուսուցիչները, աշխատակիցներն ու շրջանավարտներն իրենց ավանդում ունեն արցախյան պայքարում և հատկանշեց ոչ միայն Սամվել Սաֆարյանին, այլև տնտեսական գծով տնօրենի տեղակալ, Ռաֆիկ Արշակյանին (ով արժանացել է Շուշիի ազատագրման և Մարտական ծառայության մեդալների), Աշոտ Ապրեսյանին («Արիության մեդալ»), Վարազդատ Գևորգյանին («Արիության մեդալ»), Գագիկ Գրիգորյանին («Մարտական ծառայության», «Մարշալ Բաղդասյան», «Մայրական երախտագիտություն» մեդալներ և «ՀՀ ԶՈՒ 20 տարին» հոբե-

րենիքն ի զեն էր կոչել բանվորին ու հողագործին, ուսուցչին ու գիտնականին, բժշկին ու արվեստագետին, մարզիկին ու ճարտարագետին... Բանաստեղծ, հրապարակագիր Սատուհ Գրիգորյանը վասն հայրենյաց իմացյալ մահով ընկածների մասին այսպիսի փաստեր է բերում՝ 40 գրող, 60 նկարիչ, 110 մարզիչ-չեմպիոն, 2 հոգևորական... Իսկ Արցախից ու Հայաստանից որքան ուսուցիչներ են իրենց կյանքը դրել գոհասեղանին, ցավոք ստույգ թիվ չունենք (ըստ ԿԱԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի ֆիզիկայի մասնագետ, 20-րդ դարի լավագույն մանկավարժ Բ. Դավթյանի ուսումնասիրությունների՝ միայն Արցախից՝ 59-ը): Նրանք մարտադաշտում շարունակեցին հայրենյաց դասը՝ անձնական օրինակով կրթելով ներկա և գալիք սերունդներին: Նրանցից մեկն էլ «Մարտական խաչ» առաջին աստիճանի ասպետ, փոխգնդապետ (հետմահու) Սամվել Սաֆարյանն է, ում անունն է կրում ծննդավայր Ավդուռի հիմնական դպրոցը: Ստեփանակերտի շախմատի կենտրոնական տանը արդեն քանդիս Ս. Սաֆարյանին նվիրված հուշամրցաշար է անցկացվում:

Երբևէ մտածել է նա, որ իրեն բախտ կվիճակվի անհայր մանկության վրեժը լուծել... Փոքր էր, ընդամենը չորսամյա մի մանչուկ, երբ զրկվեց հորից. թուրք Արշադի ոճրագործության շորշոփները ոչ միայն Ստեփանակերտի, այլև գյուղերի բնակիչներին հասան: Հայրը մեկն էր նրանցից, ովքեր մարդկային արդարության օրենքով արժանի հատուցում էին պահանջում դահճի համար, ինչի արդյունքում թուրքերը նրան սպանեցին հենց իր տան մոտ: Մի անարև ու տխուր մանկություն, կորստի հետ չհաշտվող Սամիկ մոր արցունքոտ աչքեր, «ինչո՞ւ»- ներով լեցուն պատանեկություն

ՃԱՍՓՈՐԴԱԿԱՆ ՆՈԹԵՐ

ՈՒՍՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐՅԱՆ-ՍՅՈՒՆԻՔ -ՎՐԱՍՏԱՆ

Երկուրսիսաները ոչ միայն տեղից տեղ գնալու, տեսարժան վայրեր դիտելու ու հիանալու առաքելությունն ունեն, այլև մեկ անգամ ևս տարիների հեռվից վերստուգելու ու լրացնելու աշխարհաճանաչողությունն ու աշխարհագրագիտությունը: Այս մտքին ինձ համամիտ էին իմ գործընկերները, և նորից մեր՝ Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 դպրոցում մի նոր միտք հղացավ. բացի հայրենական մեր սրբություններ այցելելուց, ինչու ճանապարհորդություն չկազմակերպել նաև դեպի Սյունիք, Վրաստան՝ կրկին հաղորդակցվելու հայկական մտքի մեծություններին և այցելելու Մայր հայրենիքի ու Վրաստանի պատմական և սուրբ օջախները՝ կրկին դարեր հետ գնալու և որոշելու մեր մտքի ծաղկման հզորության ակունքները:

Ինչպես միշտ, մեր ճանապարհն անցնում է Հայաստանի սրտով, որից հետո երակները պիտի տանեն մեր նպատակադրած ճանապարհորդության արահետներով: Մեր առաջին կանգառը Խնձորեսկ գյուղն էր: Բնականաբար, մեր քայլերը տարան դեպի Մխիթար Սպարապետի գերեզմանը: Ցավալից այն է, որ շատերը չգիտեին տեղի մասին, և մեզ դժվարությամբ հաջողվեց ճշտել տեղը. մի խոր ծորում մանուկալած ուղղանկյունաձև անշուք տապանաքար էր, շուրջը՝ անտարբերության մատնված: Ի հեճուկս մարդու՝ բնությունն ավելի էր գնահատում մեծն սպարապետին. ամենուրեք բուրում էին յասամանները: Մեր հուզմունքն անչափ մեծ էր, և մտածում էինք միայն մի հարցի շուրջ. մի՞թե նա չի ունենալու իր հուշարձանկոթողը, չէ՞ որ պատմության մասին վկայում են նաև քարերը:



Մխիթար Սպարապետի գերեզմանի մոտ

Բացեմ նաև մի գաղտնիք. մենք նպատակադրվել էինք այս ուխտագնացության ժամանակ այցելել 7 սրբավայրեր: Օրվա բուռն տպավորություններից հետո մենք մեր հոգևոր անդորրն ստացանք Մեծն ուսուցչապետի՝ Սուրբ Մեսրոպ եկեղեցում: Դրա տրամաբանական շարունակությունը եղավ Վահանա-



«Գանձասարի բանալի»

վանքի վանական համալիրը՝ Սուրբ Աստվածածնի եկեղեցին (11-րդ դար): Գեղաշուք բնության վայրում ծվարել էր սրբությունը և ասես կենդանի աղոթք լիներ առ Աստված: Նրա կուսական գեղեցկությունը մեզանից մի պահ վերացրել էր աշխարհիկ զգացողությունը և մեզ տարել երկնային թագավորություն. խոսում էինք Աստծո հետ և մեր սրտի մորմոքը կիսում:

Մեր հրաժեշտը Կապանի հետ եղավ Ողջի կիրճում՝ Կապան-Քաջարան ճանապարհի վրա, որտեղ ժայռի գագաթին անեղամուկն արջն է՝ բանալին բերանում: Արջը Քաջարանի խորհրդանիշն է, բանալին՝ պղնձամուխրե-



բյան, Պերճ Պոռոջյան, Ջիվանի, Գաբրիել Սունդուկյան, Հովի. Թումանյան, Մուրացան, Ղազարոս Աղայան, Նար-Դոս: Սայաթ-Նովայի գերեզմանը տեսնելու համար այցելեցինք Սուրբ Գևորգ եկեղեցի, որտեղ հանդիպեցինք հայկական հարսանիքի և մասնակից եղանք: Թիֆլիսի ամենաբարձր տեղից՝ Ջրվարի (Խաչ) եկեղեցուց դիտեցինք երեկոյան Թիֆլիսը, գնալով Երևանի քաղաքը և մեր խոհերն ու իրականացած երազանքները հանձնեցինք Քուռ գետին:

Թիֆլիսում իր ոգու բարձրությամբ ինձ հմայեց ու գրավեց տիկնիկային թատրոնի ղեկավար Ժաննա Դավթյանի կերպարը: Եվրոպական քաղաքակրթության թոփոքում հայ էր մնացել վեհաշունչ կինը, և նրա ստեղծած տիկնիկները կերտում էին հայկական միտք, կենցաղ, հարաբերություններ: Նա իր տունը վեր էր անհանել այցելուների հավաքատեղիի, որտեղ ականատես էին լինում նրա ձեռքի ու մտքի համաճարին: Հարկավ, այն իր արմատներն ունենր. նա շարունակում էր իր ամուսնու՝ հայտնի տիկնիկագործ ու ռեժիսոր Գարի Դավթյանի ավանդույթները:

Վերջին հրաժեշտը եղավ մեզ հյուրընկալող Ալբերտ և Վիոլետա Գևորգյանների տանը, որտեղ տիրում էր գեղեցիկ և առողջ, հայաշունչ մթնոլորտ, անգամ արցախյան անկյուն ունեին՝ պետական զինանշանով, դրոշով, եկեղեցիներով, իսկ երեխաներն ու թոռները դաստիարակված են հայկական ազգային ոգով: Ուրախ էինք, որ ինչ-որ մի տեղ, հայկական մի տաք ու բնակարանում հայի ոգին ու շունչն էր թևածում. դեռ չենք հասցրել կորցնել ոչինչ, ուրեմն կարելի է նաև վերագտնել կորցրածը: Դրան պիտի նպաստի յուրաքանչյուրս: Ավարտի շիկացումը եղավ հանդիսավոր, ճոխ խնջույքը, որ մեր պատվին կազմակերպվեց երգն ու պարը, հայկական խոսքը մտրակեց Թիֆլիսի սառն ու օտար դարձած մթնոլորտը, ու մենք հասկացանք, որ, իրոք, մեր փրկությունը մեր միասնության ու ջերմության մեջ է:

Կատարեցինք մեր սուրբ առաքելությունը, տեսանք Սյունյաց աշխարհի և Վրաստանի պատմական և սուրբ օջախները, հաղորդակից եղանք Թիֆլիսի կյանքին, հայկական թաղամա Չավլաբարը տեսանք մեր աչքերով և համեմատեցինք մեր գրողների նկարագրած Չավլաբարի հետ... Իրոք, աննկարագրելի էր տպավորությունը, որի համար մենք շնորհակալ ու երախտապարտ ենք մեր դպրոցի տնօրինությանը, քաղաքապետարանի կրթության բաժնի պետ Կ. Մարգարյանին, կրթության և գիտության նախարարությանը՝ Վ. Խաչատրյանի գլխավորությամբ, մեր ծրագրին աջակցող Թամարա Չավլանյանին և Վրաստանի «Վիրահայոց» թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Սիրախանյանին, ինչպես նաև «Հայարտուն» մշակութային կենտրոնի անձնակազմին:

Կատարեցինք մեր սուրբ առաքելությունը, տեսանք Սյունյաց աշխարհի և Վրաստանի պատմական և սուրբ օջախները, հաղորդակից եղանք Թիֆլիսի կյանքին, հայկական թաղամա Չավլաբարը տեսանք մեր աչքերով և համեմատեցինք մեր գրողների նկարագրած Չավլաբարի հետ... Իրոք, աննկարագրելի էր տպավորությունը, որի համար մենք շնորհակալ ու երախտապարտ ենք մեր դպրոցի տնօրինությանը, քաղաքապետարանի կրթության բաժնի պետ Կ. Մարգարյանին, կրթության և գիտության նախարարությանը՝ Վ. Խաչատրյանի գլխավորությամբ, մեր ծրագրին աջակցող Թամարա Չավլանյանին և Վրաստանի «Վիրահայոց» թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Սիրախանյանին, ինչպես նաև «Հայարտուն» մշակութային կենտրոնի անձնակազմին:

Կատարեցինք մեր սուրբ առաքելությունը, տեսանք Սյունյաց աշխարհի և Վրաստանի պատմական և սուրբ օջախները, հաղորդակից եղանք Թիֆլիսի կյանքին, հայկական թաղամա Չավլաբարը տեսանք մեր աչքերով և համեմատեցինք մեր գրողների նկարագրած Չավլաբարի հետ... Իրոք, աննկարագրելի էր տպավորությունը, որի համար մենք շնորհակալ ու երախտապարտ ենք մեր դպրոցի տնօրինությանը, քաղաքապետարանի կրթության բաժնի պետ Կ. Մարգարյանին, կրթության և գիտության նախարարությանը՝ Վ. Խաչատրյանի գլխավորությամբ, մեր ծրագրին աջակցող Թամարա Չավլանյանին և Վրաստանի «Վիրահայոց» թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Սիրախանյանին, ինչպես նաև «Հայարտուն» մշակութային կենտրոնի անձնակազմին:

Անահիտ ՄԵՏՐՈՊՈՅԱՆ
Սյրեխ. Ա. Դուլյանի անվան հ. 2
դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՃԱՍՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱԳՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱՆ-ՍՅՈՒՆԻՔ -ՎՐԱՍՏԱՆ

13 ***
Յուրաքանչյուր ազգ գոյատևում է իր մշակույթով, իսկ մեր ժողովուրդը միշտ էլ եղել է մշակութային արժեքների արարող, որը պահպանել ու սերունդներին է փոխանցել պատմաճարտարապետական հարուստ ժառանգություն:

Մեր ուխտագնացությունը նախածեղեն է կազմակերպել է Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի Ա. Մետրոպոլիտը: Ուխտագնացությունը սկսվեց մայիսի 10-ին, ամիս, որը հայ ժողովրդի հաղթանակների խորհրդանշել է, որի պատվով կարելի է համարել Շուշիի ազատագրումը:

Մայիսի առաջին տասնամյակում Արցախի դպրոցներում անց են կացվում հայրենագիտության և արիության դասեր: Դրա հետ կապված կազմակերպվում են էքսկուրսիաներ, որոնք խթանում են սովորողների և ընդհանրապես, յուրաքանչյուր մարդու գեղագիտական ճաշակի զարգացմանը և աշխարհընկալմանը:

Հայկական լեռնաշխարհի, նրա հնությունների, պատմական նշանավոր իրադարձությունների, հերոսների մասին մեր իմացած բոլոր տեղեկությունները պատկերավոր ու համոզիչ դարձնելու համար մենք մասնակցեցինք Արցախ-Սյունիք-Ջավախք ուխտագնացությանը, քանզի ինչպես ասում են, լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել:

Մայիսյան այդ առավոտը խոստումնալից էր: Բոլորս հավաքվեցինք մեր դպրոցի բակում ու մեկնարկը սկսեցինք հրաժեշտ տալով հարազատ դպրոցին (ինչպես նախատեսված էր ծրագրով): Մինչ քաղաքից դուրս գալը մտանք եկեղեցի՝ մոմեր վառեցինք ու ստանալով Տեր-Մինասի օրհնությունը՝ ճանապարհվեցինք դեպի Գորիս: Հիանալով մայր բնության գեղեցկությամբ՝ հասանք Գորիս: Մտանք Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցի, այնտեղից էլ՝ Ալյսել Բակուրցի տուն-թանգարան: Թանգարանում մենք տեսանք Բակուրցի և նրա ընտանիքի կողմից օգտագործված շատ իրեր՝ կահույք, գորգեր, խոհանոցային իրեր, ձեռագիր գրություններ, նկարներ, թոմիր և էլի շատ հետաքրքիր պարագաներ: Այնուհետև ճոպանով բարձրացանք Տաթևի վանք: Վանքը, որը ես տեսել էի 15 տարի առաջ, ահագին փոխվել էր, բարեկարգվել: Առանձնապես ինձ շատ դուր եկավ ձիթհաման արտադրամասը, որտեղ ձեթ էին ստանում տարբեր բույսերից: Մի կես ժամ հանգստանալուց հետո շարունակեցինք մեր ճանապարհը դեպի Վրաստան: Մեքենայից դուրս գալով շնչեցինք վաղորդյան թարմ օդը, բարեհաջող անցանք հայ-վրացական անցակետերը և մտանք Թբիլիսի: Շատ սրտառու էր հանդիպումը: Վազգեն Սրբազանի հետ: Մասնակցեցինք ժամերգությանը: Նախաճաշեցինք ու սկսեցինք մեր էքսկուրսիան վրաց հողում: Կարոտներս առնելու համար մի քանի անգամ պատվեցինք Հավլաբարում, որտեղ պահպանվել են հայկական շենքերը, բայց արդեն ոչ բարվոք վիճակում, սակայն փողոցների հայկական անունները, բարեբախտաբար, առայսօր պահպանվել են: Տեսանք Հովհ. Թումանյանի տունը, որտեղ ապրում է նրա ծոռը: Հայրենասիրական բաց դաս էր այս ճանապարհորդությունը թեկուզ փորձառու ուսուցիչներիս համար: Ցանկալի է, որ այն հաճախակի կազմակերպվի նաև աշակերտների համար: Ուխտագնացության ժամանակ մենք հանդիպեցինք շատ բարի մարդկանց՝ հյուրասեր, բարեկամներ, որոնց մոտ հայոց ոգին կա, կլինի ու միշտ կմնա:

Վրացահայ մեր բարեկամները հրաժեշտի պահին մեզ բարեմաղաքներից հետո, իրենց սրտի խոսքն ուղղելով մեզ, ասացին. «Լավ մնացեք, արցախցիներ, միահամուռ ու համերաշխ, ինչքան ուժ ու կորով ունեք՝ պահեք մեր հայրենիքը, քանի որ ձեր լավ լինելով մենք այստեղ ամուր հիմքերի վրա ենք զգում մեզ»: Ակամայից հիշեցի լեզենդար Ավոյի խոսքերը. «Եթե մենք կորցնենք Արցախը՝ մենք կչոչենք Հայոց պատմության վերջին էջը»:

Խորհին շնորհակալություն այն բոլոր մարդկանց, ովքեր թեկուզ չնչին, բայց իրենց լուծան են ներդրել մեր այս գեղեցիկ ուխտագնացությունը կազմակերպելու համար:

Վալդենա ՏՈՆՅԱՆ
Սյրեփ. հ.2 հիմն. դպրոցի քիմիայի ուսուցչուհի

Ճանապարհորդության առաջին իսկ րոպեներից մեզ գերել էր Սյունիքի բնությունը: Երբ խուճուխ իջավ ծորը՝ ծաղկեպսակ դնելու Հայոց Սպարապետ Մեծն Մխիթարի (այդպես է գրված նրա տապանաքարին) գերեզմանին, քարացել էինք կախարհական, «վայրի» բնության տեսքով: Հորդառատ անձրևներից հետո ծորը փարթամացել էր, պատվել զմրուխտ կանաչով: Յասամանի թփերն էին տեղ-տեղ ծաղկել և իրենց կախարհական ու աստվածային բույրով լցրել ծորը: Թռչունների վաղ առավոտյան դայլալը, սառն ու մաքուր օդը, աչք շոյող կանաչը



Րաֆֆու գերեզմանի մոտ

մեզ ինչ-որ անբնական, անսովոր տրամադրություն էին հաղորդել:

Բացի Մխիթար Սպարապետից, այդ ծորում էլի մի շարք հայ քաջարի զինվորների գերեզմաններ կային՝ հետաքրքիր, յուրովի տապանաքարերով: Ընդհանրապես մեր ժողովուրդը քարի և խաչքարի պաշտամունք ունի: Տարիները, դարերը,



Հին Թիֆլիսում

խաչքարերը դարձրել են անկրկնելի: Բայց մինևույն է, բոլորն ու տապանաքարերն ունեն նույն ոգին: Այդ խաչքարերով է մեր ժողովուրդը կերտել մեր պատմությունը: Եվ այդ պատմությունը ուղեկցում էր մեզ ողջ ճանապարհորդության ընթացքում:

Նրանք ամենուրեք էին՝ վանքերում, եկեղեցիներում, տապանաքարերին, հուշարձաններին, սրբավայրերում, թանգարաններում, ճանապարհներին: Ամեն մի խաչքար, ամեն հուշարձան մեզ հիացնում էր իր վեհությամբ, իր անկրկնելիությամբ: Այդ քարերը մարդկանց ձեռքերում սուր էին դարձել, վահան ու նիզակ, դարձել էին նուռ, խաղող, ցորեն, ծիրան, ժանյակ ու կամար:

Մեր ծրագրի հաջող կետերից էր՝ «Հայոց ոգին վրաց հողում»: Սրան ես առավել շատ էի սպասում: Ինձ բախտ էր վիճակվել 33 տարի առաջ լինել Թբիլիսիում: Իմ հիշողության մեջ վառ էին մնացել աշխույժ ու աղմկոտ հայկական թաղամաս Հավլաբարը և Հայոց Սուրբ Գևորգ եկեղեցին (որն այն ժամանակ էլ գործող էր): Եվ մեծ ակնկալիքներով ու սպասումներով մեկնեցի խմբի հետ: Բայց շատ տխրեցի, ընկճվեցի ու մեծ հիասթափություն ապրեցի, երբ սպասածիս լրիվ հակառակ պատկերը տեսա: Հավլաբարի վաղեմի փայլը լրիվ կորել էր: Ամենուրեք քանդված ու փլված շինություններ էին, իսկ Սբ. Գևորգ եկեղեցին կարծես կուչ էր եկել և մի անկյուն քաշվել: Փակվել են գրեթե հայկական բոլոր դպրոցները, գործում է միայն մեկը՝ 104-րդ 12-ամյա դպրոցը՝ 230 աշակերտներով և 30 ուսուցիչներով, որի տնօրենը (ազգությամբ հայ) հայերեն չգիտեր:

Դպրոցի տնօրինությունը և ուսուցչական կոլեկտիվը մեզ դիմավորեցին պատշաճ ձևով:

Մենք ծանոթացանք դպրոցի առօրյային, շրջեցինք կաբինետներով: Շենքը նորոգման մեջ էր: Մեզ բոլորիս առավել շատ դուր եկավ դպրոցում տարվող ինքնավարման մեթոդը, որն ամեն շաբաթվա հինգերորդ օրը իրականացվում էր: Այդ օրը դպրոցը լրիվությամբ ղեկավարվում էր բարձր դասարանի աշակերտների կողմից: Ուսուցիչները ուսուցչանոցում, իրենց համար գրավորներ էին ստուգում, հեռուստացույց նայում, իսկ դասապրոցեսը տեղը-տեղին իրականացվում էր աշակերտների կողմից: Տնօրեն էր աշակերտը, ուսնասվար էր աշակերտը, տնտեսավար էր աշակերտը: Մի խոսքով, աշակերտների անմիջական մասնակցությամբ էր իրականացվում ողջ գործընթացը:

Հետո մենք տեղափոխվեցինք դաիլիճ, որտեղ 2-րդ դասարանի աշակերտների կողմից պատրաստվել էր միջոցառում Հ. Թումանյանի և Ղ. Աղայանի հեքիաթների թեմաներով: Այդ օրը ներկայացվում էր «Ծիտիկը» հեքիաթը: Հաղորդավարները վարժ հայերենով և վրացերենով ողջունեցին մեզ: Խոսում էին անկաշկանդ, երգում, պարում էին՝ ինչպես վաստակաշնորհ դերասաններ: Այն, որ նրանք հայեցի էին թե՛ խոսքով, թե՛ տարազով և թե՛ ոգով՝ երևում էր առաջին պահից:

Միակ բանը, որ մեզ մխիթարեց՝ Հ. Թումանյանի՝ 90 տարի առաջ ստեղծած «Վերնատանը» փոխարինելու եկած «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնն էր, որը Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր-Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի ջանքերով, բարերարների աջակցությամբ է կառուցվել (2001թ. հոկտեմբերին 10): Այդ կենտրոնը ողջ թիֆլիսահայությանը միակ կապող և համախմբող օղակն է այսօր:

Մայիսի 9-ին «Հայարտուն» կենտրոնի նախածեղենությամբ և Վրաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ Թիֆլիսի Նոդար Դումբաձեի անվան պատանի հանդիսատեսի թատրոնում կայացավ համերգ՝ նվիրված Մայիսյան եռատոմսին: Այդ համերգի մասին նրանք մեծ ոգևորությամբ էին խոսում:

Կուրա ՄԻԶԱՅԵԼՅԱՆ
Սյրեփ. հ.2 հիմն. դպրոցի կենսաբանության ուսուցչուհի

ՇԵՐԹԱՎԱՆ ԱՅՑ ԸՈՒՆԻ

Արդեն երրորդ տարին է՝ Ասկերանի շրջանի Հարավ գյուղի միջնակարգ դպրոցը համագործակցում է Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի հետ: Պաշտոնական և ընկերական հանդիպումների նպատակն է մանկավարժական փորձի և աշակերտական հետաքրքրություններին փոխանակումը:

Մայիսի 7-ին Հարավի դպրոցի կողմից հերթական այցը կազմակերպվեց դեպի պատմական Շուշի քաղաքը: Միջոցառումը նվիրված էր Մայիսյան եռատոմսին և հաղթանակի 20-ամյակին: Էքսկուրսիային մասնակցում էին աշակերտները և ուսուցիչները:

Պատմաճանաչողական էքսկուրսիայի ծրագրով հանդի-

պում եղավ Շուշիի Ա. Խաչատրյանի անվան քոլեջի մանկավարժական և ուսանողական կազմի հետ, այց՝ դեպի Շուշիի տեսարժան և պատմամշակութային կարևոր նշանակության վայրեր:

Աշակերտները փոքրիկ շրջայց կատարեցին քոլեջի կաբինետներով և ծանոթացան տեղի ուսանողների ստեղծագործություններին: Այնուհետև ընկերական խաղ-մրցույթ կազմակերպվեց վոլեյբոլ մարզաձևից՝ Հարավի աշակերտական և քոլեջի ուսանողական թիմերի միջև: Երկու թիմերն էլ հետաքրքիր խաղ ցուցադրեցին, որի ավարտից հետո քոլեջի տնօրեն Արա Հայրապետյանը շնորհավորեց երկու թիմերին գեղեցիկ խաղի համար և Հարավ գյուղը ներկայացնող

թիմին քոլեջի անունից նվեր հանձնեց: Մեր դպրոցի տնօրեն Պավել Ղազարյանն իր հերթին շնորհակալության խոսք ասաց նման ջերմ ընդունելության և նվերի համար:

Այնուհետև այցելեցինք Շուշիի Սբ. Ղազանչեցոց և նոր վերանորոգված Կանաչ եկեղեցիները:

Էքսկուրսիայից բոլորը վերադարձան վառ ու հաճելի տպավորություններով: Հուսով ենք, նման հանդիպումները հաճախական բնույթ կկրեն:

Հարավի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՈՒՄՈՒՑՈՒՄ

ՈՐ ԱՐԱՐՎԻ ՀԱՆԱԴԱՋՈՐՅԱ ՀԱՅՆ

...Տատս կնատեր վառարանի մոտ, գուլպա կգործեր ու կպատմեր հայ-թուրքական կռիվների, գաղթի, ապրած սարսափների, կորուսյալ եղբոր և հացի կարոտի մասին: Հիմա էլ, տարիների հեռվից, լսում եմ նրա լացակունած ձայնը. տատս, մի կտոր հաց բռան մեջ, շոյուն ու խոսուն է հետը, խոսուն է այնպես գորովոտ գուրգուրանքով, ինչպես մանկան հետ: Եվ միշտ բարկանում էր, երբ հացը դանակով էինք կտրում կամ մի փշուր հաց գետնին գցում...

Հացի տոն: Հացին նվիրված տոն Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ. 7 դպրոցում: «Իմ նպատակն էր, որ երեխաներն իմանան, թե ինչքան երկար ու դժվարին ճանապարհ է անցնում հացը՝ նախքան սեղանին դրվելը: Եվ հարգանք տա՞ծն այն մարդկանց հանդեպ, ովքեր մեծ չարչարանքով հաց են ստեղծում», - ասում է միջոցառման կազմակերպիչ, 3-րդ «բ» դասարանի դասավար Լիանա Սարգսյանը:



7-րդ դպրոցի դասիչը ձևավորված է այն անձնով, ինչ վերաբերում է հացին: Մի անկյունում հասկերն են ճոճվում, որոնք այսօր ծփում են երրորդիների ամարատ ու գրավիչ արտասանություններով: Կենտրոնական մասին մոտ դրված սեղանի վրա հպարտորեն շարվել են արցախյան բազմատեսակ հացերը, որոնց անուշ բուրմունքը կանչում էր բոլորին: Մի անկյունում թոնիկ էր պատրաստված՝ կարմրագույն բոցերով, կողքին՝ ցածրիկ կլոր սեղանիկի վրա՝ գրտնակ, խմոր, ալյուր, կողքին՝ վահանած սառ: Այնքան տպավորիչ էր, որ ես զգացի տատիս թխած հացի բույրն ու համը և կարոտեցի՝ կարոտեցի...

Հանդեսի մասնակիցները ազգային տարազով են: Միայն վահագն Հակոբյանի՝ ասորական Սև արքայի կեցվածքն է, որ հիշեցնում է խաղաղ ու հացաշեն հայոց աշխարհի բազում թշնամիներին: Փոքրիկ աղջնակ Անի Խաչատրյանը հյուրերին դիմավորեց աղուհացով, հնչեց դարաբարյան տխրածոր հորովելը, որին հաջորդեց հայ ժողովրդի հացապակաս տարիների հիշատակումն ու «Էս հացը վկա» երգնամբ հյուրին ու բարեկամին աղուհացով դիմավորելու գովքը: Ինչքան էլ հայերի՝ իրար հաջորդած թշնամի սև արքաներն ավերել են հայոց աշխարհի թոնիկը, քանիչ վահանած սառերը, որոնց միջոցով հայը թխել է իր խնկահամ ու անուշաբույր լավաշը, բնաջնջելու համար սովի մատնելով հայերին, միշտ էլ հային օգնության է հասել կալի աստվածուհի Հացանուշը, ում խորհրդով հայ մշակն իր տան ներսում կավից գետնավոր փուռ-թոնիկ է սարքել՝ նորից կենսական հացը մի բուռ կյանք դարձնելով: Եվ դարեր շարունակ երիտասարդ հայուհին ալյուրը մաղել, խմոր է արել, գրտնակի տակ արագ-արագ գնդերը բացել, ճակատի քրտիկը խառնելով խմորին ու Աստծու օրհնությունը խնդրելով՝ տարեց հայուհին թոնիկ վրա խոնարհվել ու հատ-հատ լավաշ է թխել. խնկաբոլոր, աղոթաբոլոր, բարակ, տա՞ք-տաք ու դարսել մաքուր, սպիտակ սփռոցի վրա: Տարածվել է հացի բույրը: Փոքրիկները վազել են դեպի թոնիկը, որտեղ հացբուխ տատը

նրանց հյուրասիրել է լավաշի մեջ փաթեթած պանրով...

Սուրբ մայր հողում քարից հաց քանոկ ժողովուրդն օրհնաբանում է ցորենը, սրբացնում հացը, այն համարում հողի ազնիվ մշակի պատիվը: Դաշտից սկսվող հացի երկար ու դժվարին ճանապարհն ուղեկցում է հողի մշակը, ուղեկցում է չարչարանքով, որ ծիլը ցողուն դառնա ու հասկազարդվի, հասունանա ու արարվի հանապազօրյա հացը՝ հողաբույր ձեռքերի հոգնությամբ, խառնված հողագործի տաք քրտիկով, ջրաղացի ձայնին ունկնդիր, թոնիկի շիկացած պատերին կպած՝ կարմիր ու անուշաբույր...

Հայն իր օթևանում միշտ ապահով տեղ

է տվել հացին, երբեք գետնին չի գցել և ոտքի վրա է կտրել հացը, հայոց օջախի հյուրին միշտ հյուրասիրել են նոր թխած հացով: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել լավաշը՝ որպես հացի արքա: Նրա մասին ժողովուրդը երգեր է հորինել.

Մեր լավաշ հացը մեր պարզությունն է,

Որ բաց ենք անում ամենքի առաջ:

Մեր լավաշ հացը մեր պատմությունն է՝

Կրակի բոցում թրծված ու հառնած:

Մեր լավաշ հացը մեր տրտմությունն է,

Համբերությունն է մեր կարկտահար:

Մեր լավաշ հացը մեր էությունն է,

Մեր Հաց-հավատը՝ աղոթք ու

Նշխար...

Մեր լավաշ հացը մեր սրբությունն է,

Երդվել, երդվում ենք միշտ հացի առաջ:

Հացի մեծարման հանդեսին մեծ հմայք էր տվել նաիրյան աղջիկների հեգաճկուն պարը, որին հաջորդել են ժողովրդի կողմից ստեղծված սրտաբուխ ասացվածքները հացի մասին: Սրբաբանի «Արցախ» երաժշտության ներքո 3-րդ «բ» դասարանի աշակերտները, միասնության բռունցքը հառնած առ երկինք, երգվել են՝ միշտ «արդար» բառով հիշել հացին ու նրա արարողին և պաշտպանել այն հողը, որին պահ ենք տալիս, որտեղ ծլում, որտեղ հասկ ու ցորեն է դառնում, որտեղ թխվում ու մի բուռ կյանք է պարզանում հացը:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը, ով հացի տոնը բնորոշեց որպես դաստիարակչական ու ազգային կարևոր երևույթ՝ նշելով դասավար Լիանա Սարգսյանի ստեղծագործական միտքն ու գործունեությունը դասապրոցեստերին և արտադասարանական աշխատանքներում: Նշեց նաև, որ նմանատիպ միջոցառումները մեծ դեր են խաղում երեխայի ազգային ոգին արթուն պահելու գործում:

Թող տունդ միշտ խաղաղ լինի, Արցախ աշխարհ, հացդ՝ առատ, թոնիրդ՝ վառ, ժողովուրդդ՝ հյուրընկալ, զինվորդ՝ քաջ...

Ամենա ԱՐԲԱՍՄՅԱՆ

Մարզական

ԼՂ Աժ ՉԿԱԾԸ՝ ՄԵՑ ԹԱՂԵՐԻ ԴՊՐՈՅՈՒՄ

Մայիսի 16-18-ը Ստեփանակերտի հանրապետական մարզադաշտում հերթական անգամ անցկացվեցին ավանդական դարձած՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների 3-6-րդ դասարանների աշակերտների միջև ԼՂՀ Աժ գավաթի խաղարկության հանրապետական՝ 3-րդ փուլի մրցումները:

Մասնակցում էին շրջանային (քաղաքային) մրցումներում հաղթող ճանաչված 3-6-րդ դասարանները, յուրաքանչյուր դասարանից՝ 2 տղա և 2 աղջիկ:

Հանրապետական փուլին ներկայացել էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ 6 շրջանների թիմերը: Չէր մասնակցում Քաշաթաղի շրջանի թիմը:

Ազգային ժողովի գավաթի խաղարկությունը անց է կացվում ԼՂՀ Ազգային ժողովի հովանու ներքո: Ամենիջական ղեկավարությունն իրականացնում են ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը և ԿԱ սպորտի պետական կոմիտեն:

Ծրագրում ընդգրկված էին վազք 60մ (3-րդ դասարանի համար՝ 30մ), վազք 500մ (4-6-րդ դասարաններ), հեռացատկ թափավազքից, ձգումներ կախ դուրսումից (տղաներ)՝ ձեռքերի ծալումներ և ուղղումներ պառակտ հենադուրսումից (աղջիկներ), թեմիսի գնդակի նետում հենադուրսումից վրա և 4x50մ փոխանցումավազք՝ 3-րդ դասարանիցների համար:

Մրցումների հանդիսավոր բացման արարողությունը, որին ներկա էին ԼՂՀ Աժ նախագահ Աշոտ Դուլյանը, պատգամավորներ, կրթության և գիտության փոխնախարար Սլավա Ասրյանը, ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեի նախագահ Ռազմիկ Դովետիյանը, սկսվեց թիմերի ավազների կողմից ԼՂՀ Աժ գավաթի դրոշի բարձրացումով:

ԼՂՀ Աժ նախագահը, ողջունելով մրցումների մասնակիցներին, շնորհավորեց նրանց շրջանային (քաղաքային) փուլերում հաղթելու արժանի և ցանկացավ հաջողություններ հանրապետության պատիվը արժանիորեն պաշտպանել ՀՀ Աժ գավաթի խաղարկության եզրափակիչ փուլում: Աժ նախագահը գավաթի այս տարվա խաղարկությունը դասեց Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումների շարքին:

Երկօրյա մրցապայքից հետո մրցավարական հանձնախումբն էլ հայտ բերեց հաղթողներին:

3-րդ, 4-րդ, 5-րդ դասարանիցների մրցապայքարում հաղթող ճանաչվեցին Հաղորթի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի համապատաս-

խան դասարանները: 6-րդ դասարաններից լավագույնը Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի 6-րդ դասարանն էր:

Ընդհանուր թիմային հաշվարկով մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝ առաջին տեղ՝ Հաղորթի շրջանի երկրորդ տեղ՝ Շուշիի շրջանի երրորդ տեղ՝ ք. Ստեփանակերտ Այսպիսով, ԼՂՀ Աժ փոխանցիկ գավաթը և Ազգային ժողովի առաջին կարգի դիպլոմը նվաճեց Հաղորթի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի թիմը (Ֆիզկուլտուրայի ուսուցիչ՝ Ռոբերտ Ավետիսյան), իսկ նույն դպրոցի երեք (3-րդ, 4-րդ և 5-րդ) դասարանները և Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի 6-րդ դասարանը (Ֆիզկուլտուրայի ուսուցիչ՝ Վալերի Մանասյան) մեր հանրապետությունը կներկայացնեն հունիս ամսում, Երևան քաղաքում կայանալիք ՀՀ Աժ գավաթի խաղարկության եզրափակիչ փուլի մրցումներին:

Մրցանակային 2-րդ և 3-րդ տեղեր գրաված թիմերը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից արժանացան գավաթների ու համապատասխան կարգի դիպլոմների:

Մրցանակային երեք տեղեր գրաված դասարաններն արժանացան Աժ պատվոգրերի:

Պարգևատրումները կատարեց ու հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ Աժ նախագահ Աշոտ Դուլյանը և մաղթեց նրանց հաջողություններ ՀՀ Աժ գավաթի խաղարկության եզրափակիչ փուլում:

Մրցանակային տեղեր գրաված դասարանները և աշակերտները պատվոգրերի և դրամական խրախուսանքի արժանացան ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեի կողմից:

Հաղթող թիմերը և ըստ դասարանների լավագույն ճանաչված աշակերտները թանկարժեք նվերներ և պատվոգրեր ստացան ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից:

1-3-րդ մրցանակային տեղեր գրաված 3-6-րդ դասարանների բոլոր աշակերտներն արժանացան պատվոգրերի և դրամական պարգևների: Դրամական խրախուսանքի արժանացան նաև մրցանակային տեղեր գրաված դասարանների ուսուցիչները:

Պարգևատրումները կատարեց ու հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Ս. Ասրյանը:

Մուրադ ՇԱՐԱՍՄՅԱՆ

ԱՌՈՂՋ ՀՈԳԻՆ՝ ԱՌՈՂՋ ՄԱՐՄՆՈՒՄ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում ամփոփվեցին դպրոցականների չորրորդ սպարտակիարայի արդյունքները: Սպարտակիարայի ծրագրով ուսումնական տարվա ընթացքում մրցումներ են անց կացվել մինի ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, թեթևաթևիկա մարզաձևերից: Ընդհանուր արդյունքներով առաջին տեղը գրավել է Ստեփանակերտի թիմը, երկրորդ տեղը՝ Մարտունու, երրորդ տեղը՝ Ասկերանի թիմը: Նախարարի հրամանով Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժինը պարգևատրվեց պատվոգրով և փոխանցիկ գավաթով (երկրորդ անգամ), Մարտունու և Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժիններն արժանացան պատվոգրի և գավաթի:


Շնորհավորելով պարգևատրվածներին՝ ֆիզկուլտուրայի գծով նախարարության զխնակոր մասնագետ Արթուր Աբանեսյանը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ մրցանակային առաջին տեղ գրաված Ստեփանակերտի թիմն ընդամենը մեկ միավորի առավելությամբ է դարձել առաջատար՝ մատնանշելով շրջանային թիմերի լավ պատրաստված լինելը և դրանում վերոնշյալ մասնագետների ներդրումը և մաղթեց, որ բոլոր շրջաններում առկա լինեն նման կարգի մասնագետներ, որոնք ակտիվ աշխատանք են տանում առողջ գեներֆոնդի ձևավորման գործում:

ԼՂՀ ԿԳ նախարար Վլադիկ Խաչատրյանը պարգևատրում կատարելով՝ շնորհավորանքի հետ միասին շնորհակալություն հայտնեց նրանց՝ բարեխիղճ և նվիրված աշխատանքի համար: Այն, որ առաջին տեղ գրաված թիմն ընդամենը մեկ միավորով է առաջ անցել, այն դեպքում, երբ մրցանակակիրները վաստակել են շեմային բարձր միավորներ, նշանակում է՝ եղել է բարձր և առողջ մրցակցություն և ամենից կարևորը՝ առկա է մեծ աշխատանք, գնահատելով կատարածը ասաց նախարարը՝ շեշտելով որ մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակությունը պետք է բարձր մակարդակի վրա լինի, պետք է առողջ մարմին ձևավորվի: Եթե դա լինի, մարդու հոգևոր աշխարհը, ընդհանուր աշխարհայացքն էլ ճիշտ կձևավորվի: Ասել է թե՛՝ առողջ մարմնի մեջ պետք է տեսնել այդ ամենը: Նախարարը ընդգծված շնորհակալությամբ արտահայտվեց մասնավոր գյուղական բնակավայրերի մասնագետների մասին, որոնք նման աշխատանքներ իրականացնում են՝ չունենալով համապատասխան պայմաններ՝ մարզադահլիճ, խաղահրապարակներ, բայց ունեցածը կարողանում են լիարժեք օգտագործել և լավ արդյունքների հասնել:

Սեփ. Լրատվություն

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՄԵՐ ՈՒՍՄԱՎԱՐԸ` ՀԱՎԵՐԺԻ ՃԱՏՓՈՐԴ



Նա հավերժ գնաց՝
Հասակը առած,
Պարտքերը մարած,
Սերները ցանած,
Ժառանգներ թողած,
Թոռներ սերմանած,
Սաներ թողարկած,
Կյանքը կանթեղած
«Մեր ուսմավարը»
Անվան տիրացած:

Այո, հավերժության գիրկն անցավ Վարանդայի գավառի հինավուրց Սխորաշեն գյուղի Շվերդունց տոհմի (որն արժանացել է ազգագրագետ Երվանդ Լալայանի գովքին այն առումով, որ այդ գյուղի հարսանիքները կատարվում էին այդ և Սահակ Քյոխանց բակերում, ինչպես որ Վարանդայի հերթան գյուղում Փարամազանց, Չերիերում՝ Չալունց, Ծովատեղում՝ Բղերանց, Գյուլնե ճարտարում՝ Խոջանց, Սիրգաբեկանց, Տոցուց, Սարուշենում՝ Քյոխանց, Ավետարանոցում՝ Մելիք-Շահնազարանց հարզված օջախներում) ծնունդ Վարդան Սողոմոնի Մուսայեյան մանկավարժը: Նա, որ 6 տարեկան որբի հասակից մաքառել է կյանքի համար, հասակ առել, առնականացել ու դարձել իրենց գլխատված տան հուսո ճրագը, իսկ հետագայում գնացել ուսման արահետներով և 1945թ. ավարտել Շուշի քաղաքի երկամյա ուսուցչական ինստիտուտի ֆիզմաթ բաժինը, իսկ 1953-ին՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի նույնանուն բաժինը (հեռակա), դարձել Մարտունու շրջանի լավագույն մաթեմատիկայի ուսուցիչներից մեկը և շուրջ 60 տարի աշխատել Կարմիր Շուկայի ենթաշրջանի Սխորաշեն, հերթան և Չերիեր գյուղերի դպրոցներում, իսկ հետո էլ հիմնավորվել Կարմիր Շուկայի դպրոցում: Նա այդ տարիներին մեր շարքային ուսուցիչ էր հայրենի Սխորաշենում ու Չերիերում, մեր դպրոցի տնօ-

րեն հերթանում ու մասամբ էլ՝ Կարմիր Շուկայում ու առավելապես դարձել է այդ նույն դպրոցի երկարամյա ուսմավարը, որ տևել է տասնամյակներ: Նա ուսուցչուհի կնոջ՝ Արաքսյա Բաղդասարյանի հետ հասցրել է ստեղծել օրինակելի ընտանիք և իր երեք գավակներին տվել բուհի կրթություն. Անժելային՝ բժշկի, Ստելլային՝ մանկավարժի, որն այժմ ճարտարի ավագ դպրոցի փոխտնօրենն է, իսկ միակ որդի Լյուկային՝ ճարտարապետի մասնագիտություններ: Բայց մեր լավ մանկավարժ-ուսմավարի համար առաջնայինը համարվում էր իր մասնագիտությունը, որին անմնացորդ նվիրեց իր երկարամյա կյանքը: Այս առումով արժե, որ ասենք՝ նա ոչ թե մահացավ ու հանձնվեց հողին, այլ հանձնվեց իր մասնագիտությանը: Ասենք ու գրենք, որ 89-ամյա այս մանկավարժն ապրեց ճիշտ ու բովանդակալից, քանզի ապրեց այնպես, որ կրեց մյուսների համակրանքը, որի առնչվածությամբ բոլորի կողմից նրան «Մեր ուսմավարը» անվանակոչելն է, որ դարձել էր նրա մականունը: Նրա համար թերևս կյանքը կարճ էր, որ չբավականացներ քաղաքավարի ու իմաստալից ապրելու համար, և ապրեց: Մեր ընկեր մանկավարժը հպարտ էր իր սաներով, քանզի նրա ցանած ուսուցչական սերունդը տվել են իրենց արգասավոր պտուղները: Նրա սաներից մեկ տասնյակն ընտրել են իրենց ուսուցչի մասնագիտությունը: Վարդանը այն ուսուցիչներից էր, որ կարողանում էր իր սաներին օժտել մասնագիտության մեջ ուրախությունը գտնելու ընդունակությամբ: «Ընկեր Մուսայեյանը Կարմիր Շուկայի ծոբակի դպրոցների մաթեմատիկայի այն միակ ուսուցիչն էր, ըստ իս, որ առանց շահի ու վարձատրության պարապում էր իր աշակերտների հետ արտաժամյա կարգով ու վերջում էլ աղայանական ոճով (խոսքը Ղ. Աղայանի բնույթի մասին է), իր սաներին առաջնորդում բուհեր», - ասում է նրա նախկին աշակերտուհի, այժմ՝ Քարահունջի հիմնական դպրոցի մաթեմատիկայի մասնագետ Լիանա Մելքունյանը: Դպրոցի ղեկավար աշխատած ժամանակ երանելի այդ

մանկավարժը սիրում էր կրկնել ռուս մանկավարժ Վ. Կլյուչևսկու բառերը. «Լավ դասատու լինելու համար հարկավոր է սիրել այն, ինչ դասավանդում ես և սիրել նրանց՝ ում դասավանդում ես»: Եվ իրոք, նա սիրում ու հարգում էր աշակերտներին՝ գտնելով, որ դաստիարակության գաղտնիքն աշակերտին հարգելու մեջ է: Օրինավոր մարդ էր և իր իրավունքը չափում էր իր պարտքով, ստանալուց առաջ մտածում էր նախ տալու մասին: Աշխատասեր էր ու պրպտող, հետամուտ էր պաշտոնավարության մեջ: Դժբախտության հոտը շատերի պես նա էլ է ներքաշել. Արցախյան պայքարի ընթացքում զոհ տալով իր մանկավարժ աղջկա ամուսնուն՝ կրեց նրա ընտանիքի ծանրության տակ և իր ծերունական կյանքն սկսեց ծառայեցնել թոռներին, իմանալով, որ ծերունին մարդ լինելուց զատ նաև արժեք է, իմաստուն, հիշող, խոսող, տոհմին ու ազգին ծառայող ու խրատող, իսկ մանկավարժ ծերունին՝ առավել քան: Ընկերասեր էր, սիրում էր հանգստորաստից կատակներ անել, գոռոզ չէր, ատում էր սիլիբիլությունը, ինչ որ ասեր, երեսիդ կասեր, հյուրասեր էր ու լավ բարեկամ, ատում էր շողոքոքությունը: Արժանացած էր կառավարության շատ պարգևների, որին շատ էր արժանի: Բայց ավա՜ր, նրա կյանքի վերջին 20-ամյակն անձնական առումով սևով երիզվեց. մահացավ կինը, և նա ստիպված էր ապրել ինքնին կյանքով ու երբեմն էլ հենվել իր գավակների և մարդանոտ հարևանների վրա, իսկ առավել քան դժբախտությունն այն էր, որ ծերունի մանկավարժի տաղտուկ կյանքին գունարկվեց տեսողության խնդիրը: Դե ինչ, կյանքն է այդպես, չէ՞ որ երջանիկ կյանք չի լինում, լինում են երջանիկ օրեր, չէ՞ որ ամեն մի կյանք էլ մի քիչ անձրևոտ եղանակ է ունենում, երբեմն էլ՝ նույնիսկ կարկտաբեր: Մ. ԲԵՂԱՐՅԱՆ
Երջանկահիշարակի
ուսանողական և աշխարհաբային ընկեր,
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ

ԱՆՄԱՅՈՐԴ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ



Եթե հայերենում «բարություն» բառը նաև անձնանուն լիներ, ապա այն շատ կվայելեր նրան, նրա էությանը: Ինչ շրջապատում էլ հայտնվում էր, շուրջը սփռում էր զրնգուն ծիծաղ, աշխույժ մթնոլորտ: Նրա մոտ զինաթափ էին լինում չարն ու չարությունը, սուտն ու կեղծիքը: Նման էր անաչառ դատավորի: Հուսահատվել չգիտեր, նույնն էր պարտադրում դիմացինին: Չարմանալի պայծառ լավատեսությամբ էր օժտված ու չէր զլանում իր հոգում կուտակված բարի հունդերը շող տալ ամենքին ու ամենուր: Էլլադա Գրիգորիի Բաղդասարյան: Պարզ ու անպաճույճ մի կենսագրություն՝ հոգու հետ ներդաշնակ: Ծնվել է 1951թ. հուլիսի 10-ին, Քիրսի ստորոտում հանդիսավոր բազմած Ավետարանոց գյուղում: Ավարտելով միջնակարգ դպրոցը՝ 1969 թվին ընդունվում է Շուշիի մանկավարժական ուսումնարանի նախադպրոցական բաժինը և ավարտում այն 1971թ.: Նույն թվականին ընդունվել է աշխատանքի գյուղի մանկապարտեզում՝ որպես վարիչ: 20 տարի նա անընդմեջ աշխատել է իր մասնագիտությամբ՝ առանց ձանձրության, սիրով, եռանդով, նվիրվածությամբ: Տարիներ շարունակ մանկապարտեզն ուներ 2-3 խումբ երեխաներ՝ տարբեր տարիքի, աշխատանքային բազմանդամ կոլեկտիվ: Ես այն երջանիկներից եմ, որ բախտ եմ ունեցել մեկ տարի աշխատել նրա ղեկավարած կոլեկտիվում: Ինչպիսի՜ աշխատանքային կարգապահություն էր սահմանել նա. ոչ մի թույլ ուշացում կամ անհարգելի բացակայություն, ոչ մի թույլ սահմանված ռեժիմի խախտում: Մանկապարտեզում ընդգրկված էին գյուղի նախադպրոցական տարիքի բոլոր երեխաները՝ առանց բացառության: Նրա տաքուկ գրկում դադարում էին լացելուց անմեղ փոքրիկները, սիրում էր նրանց, գուրգուրում, պաշկներ ու ժպիտներ պարզում, ու նրանք մոռանում էին՝ ինչի համար էին լացում. փուչիկի՞, թե՞ կոնֆետի: Տիկին Էլլադան անսպառ եռանդով էր օժտված: Աշխատելու այդ տարիներին ցուցաբերել է անաչառություն ու տոկունություն. ինչպե՛ս էր նա մատակարարում սննդամթերքը կամ մյուս պարագաները շրջանից, մարզից, կոլտնտեսությունից՝ ճիշտ

ու ժամանակին: Առանց չափազանցելու պետք է շեշտեն, որ շատ հաճախ նա իր տնից բերում էր մթերքներ կամ՝ ինչ որ խիստ անհրաժեշտ էր այդ պահին և փոխարենը ոչինչ չէր վերցնում: «Ինչի՞ս է պետք», - կասեր նա: Գուցե չհավատան ընթերցողները, տիկին Էլլադան լիքը պայուսակով աշխատանքի էր գալիս, դատարկածեռն տուն վերադառնում (այդ մասին կվկայեն նրա գործընկերները): Կարեկցանքի մարմնացում էր նա, որի շնորհիվ էլ վայելում էր իր կոլեկտիվի սերն ու հարգանքը: Այսպես անսպառ եռանդով, նվիրվածությամբ աշխատեց երկու տասնամյակ՝ մինչև 1991 թվականը, երբ գյուղի մանկապարտեզը փակվեց Արցախյան պատերազմի պատճառով: Շարունակեց իր կենսախիղճ կյանքը կենսաժպիտ տիկին Էլլադան: Որպես աշուն մի տատիկ՝ նա շարունակում էր շոյալել իր ունեցածն ու չունեցածը: Ոսկե մատներով տանտիկին էր, հոգատար կին, սիրող մայր, գորովագուր տատիկ, դողում էր թոռների համար, սիրում էր հարսին աղջկա պես: Ամուսնու մահից հետո իր փխրուն ուսերի վրա է վերցնում ընտանիքի ծանր բեռը: Ամուսնու բարեկամներին ավելի մոտ, ավելի ջերմ էր ընդունում, հարգում, ամիսներով հյուրասիրում, քան իր հարազատներին կամ բարեկամներին (չէ՞ որ սակավ են նման մարդիկ մեր օրերում): Գյուղի բոլոր զոհերի համար արցունքներ ուներ, կարեկցում էր դիմացինին, օգնության ձեռք մեկնում աղքատներին, բաժին տալիս կարիքավորներին, հուսադրում այրի կյանքն ու որբերին: Նրան կարելի էր վստահել ցանկացած պահի, թափանցում էր հոգու խորքը, իսկ իր հոգին դարձել էր մի գաղտնարան, ամեն ինչ պահում էր այնտեղ խնամքով ու երկյուղածությամբ: Ու ի՞նչ լավ է, մեր սիրառատ Էլլադա, որ դու կայիր մեր կյանքում, մեր գյուղում, մեր հասարակության մեջ: Դու չունեիր միջին տրամադրություն: Երբ գյուղը հրճվում էր, հրճվում էր դու լիաթոք, երբ սգում էր գյուղը, սգում էիր դու ամբողջ երթամբ: Վերջին օրերին նույն այդ գյուղը սարսռաց, երբ գուժեց թոմսահվան բոթը: Սզացինք գյուղովի՜ մեծով ու փոքրով: Մնա՛ս բարով, իմ ավագ, ընկեր բարի՜ խորհրդատու, ազնիվ բարեկամ: Ես շա՛տ կկանենայի, որ այս տողերը հնչեին որպես շնորհավորանքի խոսքեր: Բայց ճակատագրից խուսափել չի լինի՝ դաժան և անբուժելի ցավը իլեց քեզ մեր շարքերից: Խլեց կյանքը, բայց ամուռն չի կարող, քանզի թո հիշատակը միշտ վառ կմնա բոլոր քեզ ճանաչողների սրտերում: Նվարդ ԲԱՐՅԱՆ
Ավետարանոցի միջն. դպրոցի
և Լեզվի և գրականության ուսուցչուհի

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉՆՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոտ» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3215: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 01.06.2012թ.: